

15-16(690-691)  
05.07.2023  
Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինաստիճանն և գիտաբար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԱՐԱՐ

Лусарар ●

ԿՐԹԱԳԻՏԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

● Lusarar

## Վարդան ՀԱԿՈՐՅԱՆ-75

## ՏԱՃԱՐՆ ԱՍՏԵՈՒ



Արցախում արյուն է: Դժվար ու ծանր օրեր է ապրում Արցախը: Եվ ճանապարհը, ելքը մեկն է: արցախցիները պիտի վերադառնան Արցախ, պիտի գան ու շենացնեն իրենց հող-հայրենին, այլապես՝ մնացածը սուտ է, ահավոր սուտ:

Վաչագան Բարեպաշտը իր Միեր եղբոր օրինակով մտել է քարայր՝ Քիրսի մի լանջին, սպասում է, երբ բոլոր արցախցիները վերադառնան Արցախ, ինքն էլ այնժամ քարայրից դուրս կգա, որովհետև քարայրում մնալն արդեն անհնարին կդառնա:

Ու Արցախը նորից կմնա Արցախ:  
Իմ այս գործում դիմելով պատմությանը՝ մեր ապագան այսպես են ուզում տեսնել:

Ամեն մի արցախցու վերադարձ՝ Արցախի վերադարձն է Արցախ: Մեր թեւերով, մեր արմատներով ամուր գոկենք ու պինդ պահենք մեր չքնաղ, մեր հրաշալի, մեր անկրկնելի, իրենով այս աշխարհը գեղեցկացնող Արցախը:

Աշխարհում գեղեցիկ ու չքնաղ շատ աշ-

խարհներ կան, բայց ոչ մեկը Արցախ չէ: Արցախի սերը՝ տաճար է աստվածային:

Բարեւ, Արցախ:  
Այժմ եւ միշտ, հավիտյանս հավիտենից՝ բարեւ...

ԱՅ ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպվող ամենամյա ասմունքի մրցույթն այս տարի նվիրված էր մեծանուն արցախցի բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Վարդան Հակոբյանի ծննդյան 75-ամյակին: Այն կարող էր լինել նրա վեհաշուք ներկայությամբ, սակայն, ցավոք, օրեր առաջ հրաժեշտ էր տվել երկրային կյանքին: Մրցույթի հանրապետական փուլն անցկացվեց Վ. Հակոբյանի հիմնադրած «Գրիգոր Նարեկացի» համալսարանում: Այն մեկնարկեց ԱՅ օրհներգով, որի բառերի հեղինակը Վ. Հակոբյանն է (տես նաև էջ՝ 10):

## ԱՆՅՅԱԼԻ, ՆԵՐԿԱՅԻ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՏԱՐԵԳԻՐԸ



պատվորեն ճանաչել տալ իրեն: Նա, ով ունակ է համարժեք գնահատել իր կենսատարածքը, կարողանում է նաև լուծել մշտագոյության խնդիրը: Այս բանաձևումը վստահաբար կարելի է կրկնել նաև «Ազատ Արցախ»-ի պարագայում:

Խոստովանենք, խորհրդային կեղծ ինտերնացիոնալիզմի պայմաններում համայնավարական գաղափարական հարթակն ազգային ինքնության արտահայտման ամբիոն դարձնելը յուրօրինակ խիզախություն էր, ու պիտի արժանին մատուցել բոլոր նրանց, ովքեր կարողացել են Արցախին սպառնացող իրական վտանգները կանխագուշակել ու հնարավորինս չեզոքացնել: Եթե այդպես չլիներ, ապա Արցախը դեռևս ԽՍՀՄ-ի օրոք «մախիթևանացված» կլիներ: Կարելի է առանց վարանելու փաստել, որ, չնայած իր կուսակցական պատկանելությանը, թերթը միշտ էլ եղել է ժողովրդի կողքին ու նրա հետ:


Պատմությունը կրկնվելու հատկություն ունի, և այս ճշմարտության համընկալմամբ պետք է արձանագրել, որ Արցախյան գոյապայքարի նոր հանգրվանը՝ չարաղետ 44-օրյա պատերազմով, հազարավոր զոհերով ու տարածքային կորուստներով, նոր մարտահրավերներ է առաջադրում: Չկասկածենք, որ «Ազատ Արցախ»-ը, ինչպես որ դա եղել է հարյուրամյա կենսագրության ընթացքում, դարձյալ գտնվելու է Գոյապայքարի առաջնաշարքում՝ կատարելով թերթին վերապահված կարևոր առաքելությունը: Եվ լույս ընծայված ամեն մի նոր համար բացելով՝ արցախցին անպայման արդարության ու հաղթանակի վստահություն է ստանալու...

Քառորդ դարից ավելի մասնագիտական աշխատանքով կապված լինելով «Ազատ Արցախ»-ին, հպարտ ու պարտավորված զգալով դրանով՝ մաղթում են.

- Թող հարյուրամյակների անբեկանելի իմաստությամբ միշտ հագեցած լինեն էջերդ, մեր մայր թերթ:

Սվերկանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ



Ավարտվեց բուհերի ընդունելության միասնական քննությունների հիմնական փուլը: Ի՞նչ արդյունքներ են արձանագրվել: «Լուսարար»-ը ներկայացնում է վերլուծություն՝ ըստ ԱՅ ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանի տվյալների:

Միասնական քննություններն անցել են բնականոն հունով. խնդիրներ չեն ծագել, ամեն ինչ անցել է կարգին համապատասխան: Յուրաքանչյուր քննության ավարտից հետո՝ 5-րդ, իսկ վերջին քննությունից հետո՝ 3-րդ օրը ՀՀ ԳԹԿ-ից ստացվել են դիմորդների գնահատականները: ԱՅ ԳԹԿ-ն դրանք անմիջապես ուղարկել է քննական կենտրոններ՝ փակցվելու, ինչպես նաև փակցված են ԳԹԿ-ում, ուղարկվել են կրթության բաժնիներ, այնտեղից էլ՝ դպրոցներ, որպեսզի դիմորդները տեղում օպերատիվ կերպով տեղեկանան իրենց գնահատականներին և որևէ անհամաձայնության դեպքում նշված ժամկետում՝ հուլիսի 1-ին մինչև ժամը 18.00-ն կարողանան բողոքը ներկայացնել ԱՅ ԳԹԿ: Միասնական քննությունների հիմնական փուլում 9 դիմորդ բողոքարկել է: ԱՅ ԳԹԿ-ն վերանայել է նրանց պատճենահանված ձևաթղթերը և ուղարկել ՀՀ ԳԹԿ:

Հուլիսի 2-ին ՀՀ բողոքարկման հանձնաժողովը վերանայել է բողոքները: Դրանք բա-

վարարված են: Դրական միավորներ ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները կարող են մասնակցել լրացուցիչ փուլի հայտագրմանը և իրենց գնահատականներով մասնակցել թափուր տեղերի մրցույթին, որը հայտարարվելու է հուլիսի 16-26-ը: Հուլիսի 26-ից հետո կլինեն ամբողջական թվերը:

Չսպասելով քննությունների լրացուցիչ փուլին՝ ԳԹԿ-ն սկսել է դիմորդներին հանձնել միասնական քննությունների արդյունքների վկայագրերը:

Ընդհանրապես լրացուցիչ փուլում պետք է հայտագրվեն միայն հիվանդության պատճառով բացակայածները, զորացրված զինծառայողները և օտարերկրյա քաղաքացիները: Օտարերկրյա քաղաքացիներ այս տարի չեն եղել: Լրացուցիչ փուլի համար հայտագրվել է 16 հոգի, որից 3-ը հիվանդության պատճառով հիմնական փուլին չմասնակցածներն են, 13-ը՝ նոր հայտագրվածները, որոնք տարբեր պատճառներով չէին հայտագրվել (թյուրիմացաբար ածական համարը վերցրել են, բայց dimord.am-ում չեն հայտագրվել նաև այլ պատճառներով): ԱՅ ԳԹԿ-ն խնդրել է ՀՀ ԳԹԿ-ին՝ թույլատրել նրանց հայտագրումը:

Իսկ այն դիմորդները, ովքեր քննություն են հանձնել հիմնական փուլում, հասկանալի է, 2-րդ անգամ չեն հայտագրվել:

ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂ

ՀՐԱԺԵՇՏԻ ՄԻԶՈՅԱՌՈՒՄ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ  
Հ. 2 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂՈՒՄ

Այս օրերին հրաժեշտի միջոցառումներ են կազմակերպվում հանրապետության բոլոր մանկապարտեզներում, որը, կարելի է ասել, յուրահատուկ հաշվետու քննություն է, երեխաների ձեռքբերումների և արդյունքների ամփոփում:

Յուրաքանչյուրի կյանքում ամենապայծառ ու անմոռաց հիշողություններն, անշուշտ, կապված են մանկության և հատկապես մանկապարտեզի հետ, որտեղ տրվում են հասուն կյանք մուտք գործելու անհրաժեշտ հիմքերը:

Ստեփանակերտի հ.2 պետական մանկապարտեզին հրաժեշտ տվեցին միջին խմբերի սաները, որոնք իրենց ուսումը կշարունակեն հանրակրթական դպրոցների նախադպրոցական (ավագ) խմբերում: Փոքրիկները հրաժեշտ տվեցին անհոգ ու ուրախ օրերի իրենց մանկության դարբնոցին և հրաժեշտի այդ պահով էլ մի նոր էջ է բացվում նրանց կյանքում, որն էլ կդառնա հաջող սկիզբ ու մեկնարկ առավել կարևոր մի նոր փուլի:

Երեխաները հանդես եկան գեղեցիկ կատարումներով՝ բանաստեղծություններով, երգ ու պարով, խոստացան նաև լավ սովորել, ազգին ու երկրին պիտանի մարդ դառնալ: Մանկապարտեզի սաների շուրթերից հնչեցին շնորհակալական խոսքեր տնօրենի, դաստիարակների և բոլոր նրանց հասցեին, ովքեր ջերմությամբ, բարությանբ ու հոգատարությամբ են շրջապատել և պարուրել իրենց: Հենց

նրանց անձնուրաց, ինքնամոռացումի հասնող ջանասիրության շնորհիվ է, որ իրենք սերտել են կյանքի այբուբենը, քայլ առ քայլ ճանաչել շրջապատը, աշխարհը, հենց նրանք են իրենց մանկությունը դարձրել հեքիաթային:

դառնա ձեր կյանքի մշտական ուղեկցող, թող ունենաք խաղաղ վաղվա օր, ու այդ խաղաղությունն ու անհոգությունն երբեք չլքեն ձեզ:

Բարի երթ դեպի գիտելիքների կախարդական աշխարհ:

Միջոցառումը տնօրեն Ռեմա Բարխուդարյանի վառ երևակայության և մտահղացումների մարմնավորման արդյունք է, ծնվել է նրա պրպտող մտքի շնորհիվ և իրագործվել ողջ կոլեկտիվի ուժերով:

Ներկա էին ԿԳՄՍ նախարարության և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի պատասխանատուներ, հյուրեր, ծնողներ:



Սաների շուրթերից հնչած ամեն մի բառ համոզիչ էր միջոցառմանը ներկա գտնվողների համար, քանզի ապագայի հանդեպ հենց նրանք են, որ հույս ու հավատ են ներշնչում ապրողներին, որ ամեն ինչ դեռ կորած չէ, որ Արցախը կա, ապրում է ու ապագայի հաղթանակները հենց այս սերունդն է կռելու:

Սիրելի՛ փոքրիկներ, թող կանաչ ու լուսավոր լինի ձեր անցնելիք ճանապարհը, թող հաջողության աստղը

ԱՅ ԿԳՄՍՆ ՆԱՃԱՐԱԿԱՐԳՐՈՑԿԱԿԱՆ ԿՐԹՈՒՅԱՆ ԲԱԺԻՆ



ԽՈՍՔ  
ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ



Շուշիի պետական մանկապարտեզում տոն էր: «Նռան հատիկ» խմբի 20 լուսավոր ու չքնաղ բալիկներ ճանապարհվեցին դեպի դպրոց: Առիթ է՝ որպես ծնող իմ շնորհակալությունը հայտնելու մանկապարտեզի ամբողջ անձնակազմին՝ տնօրեն տիկին Աբրահամյանի ղեկավարությամբ: Մեծ պատասխանատվություն է, և ոգու մեծ ուժ է անհրաժեշտ ղեկավարել կամ աշխատել Շուշիի պետական մանկապարտեզում Ստեփանակերտում: Բերդաքաղաքը պաշարված է, մանկապարտեզը Շուշիում չէ, բայց Շուշին մանկապարտեզում է՝ որպես մեր անցյալի և ապագայի հաղթանակների խորհրդանիշ ու տեսլական:

Հարգելի՛ տիկին Աբրահամյան, սիրելի՛ դաստիարակներ, դասակներ, դուք եք դնում մեր երկրի ապագայի հիմնաքարը, ձեր հոգատար հայացքների ներքո ամեն օր ծնվում են բազում երազանքներ՝ աշխարհի ամենագեղեցիկ, ամենամանեղ, բայց ամենախիզախ երազանքները: Մոր նման փայփայեք այդ երազանքները՝ դրանք մի օր իրականանալու աներեր հավատով:

Հատուկ շնորհակալություն «Նռան հատիկ» խմբի՝ մեր երեխաների համար պաշտամունք դարձած դաստիարակներ ընկեր Լիանային, ընկեր Մարինային, ընկեր Անահիտին: Ընդհանրապես եմք ձեր հոգատարության, քնքանքի, բարձր պատասխանատվության, վարակիչ խանդավառության համար:

Բարի՛ երթ, մեր սիրելի փոքրիկներին: Թող նրանց երկինքը անխռով լինի, նրանց ճանապարհը հարուստ լինի մեծ ու փոքր հաղթանակներով:

Օճող

ՀԱՅՈՑ ՄԱՏՈՒԹՅՈՒՄ ՄԻ ՄՈՍ ԷԼ ՎԱՌՎԵՅ

Այբուբենը սովորելու առթիվ առաջին դասարանցիների հանդեսը ոչ միայն տոն է սաների, դասավարի համար, այլև յուրատեսակ հաշվետվություն, թե ինչ են նրանք սովորել այդ մեկ տարվա ընթացքում: Եվ ամեն դասարան ներկայանում է յուրովի: Բոլորի մոտ, սակայն, կարմիր թելի պես անցնում է այն գաղափարը, որ հանձին իրենց ևս մեկ սերունդ է միանում Մեծն Մաշտոցի անպարտելի բանակին: Ու քանի դեռ ամեն նոր սերունդ գիտակցում է, որ հայոց այբուբենը մեր ազգի միաբանության մատուցում է, ինքնության պահպանման բանակին, հավերժ է հայր:

ցախի շրջափակումը, ապրելու նրանց ոգին ոչ միայն չի լքել, այլև ապրեցնում է շատերին: Վկան՝ դպրոցի գործունեությունը, և մասնավոր

Եվ շինում էր, և՛ երգում, և՛ մեն մի շյուղ կայցնելիս Առաջվա բույնն էր հիշում:

Մտրոպայան գորագույնի շարքերն անցած նորակոչիկները երգով, պարով, հայ գրողների՝ հայոց այբուբենին ձոնած տողերով, ասույթներով, պատմելով, ցուցադրելով իրենց հաստատականությունն են արտահայտում՝ ամուր պահելու հայոց բերդ-ամրոցն անասան պահող վահանը՝ Մաշտոցի անարյուն զենքը: Ինչպես բանակում յուրաքանչյուր զինվոր, նրանք էլ երգվում են պահել-պահպանել հայոց լեզուն՝ որպես սերնդեսերունդ փոխանցված տոհմական սրբություն:

Առաջին անգամ չէ, իհարկե, որ նման ծիսակատարության ենք ականատես լինում, և ամեն անգամ ու առավել ևս՝ ներ-

թանքն է սաներին. «Սիրեք ու պահեք մեր լեզուն աչքի լույսի պես ...»:

Մեզ ցրեց մի բազուկ անօրեն, Թե կուզես սերունդներ մեզ ներեն, Մենք Հայ ենք, եկ խոսենք Հայերեն:

Եվ թող երբևէ բանաստեղծի այս տողերը ձեզ չվերաբերեն.

Իջնում են հայոց լեռներեն, Ինչպես թեթևատ մեր պախրան, Նայվածքդ այնպես նախրան Յմայքդ այնպես հայերեն՝ Իջնում են հայոց լեռներեն, Ինչո՞ւ չես խոսում հայերեն...

Դպրոցի տնօրեն Գոհար Սկրտչյանի շնորհավորանքը երեխաներին, դասավարին հաջող քննություն բռնելու առթիվ է: Նաև ասում է, որ ամբողջ միջոցառման ժամանակ ականայից ինչ էլ է Մուշեղ Գալշոյանի խոսքերը, երբ հերոսը՝ Չորի Սիրուն, իր զավակին ռազմաճակատ ճամփելիս ասում է. «Լաո՛, հողի կորուստ կորուստ չէ, դա հնարավոր է ետ բերել, մարդու կորուստն է կորուստ, որ երբեք հնարավոր չէ ետ բերել»: Եվ կուզեմար գրողի այդ խոսքին ավելացնել ևս մեկը. «Մարդու կորուստի հետ լեզվի կորուստն է կորուստ: Եթե մենք կորցնենք մեր լեզուն, սկսենք խոսել օտար լեզվով, այդ ժամանակ իսկապես կկորչենք»:

Բայց այսօր մեր երեխաները մեզ այնքան ոգևորեցին իրենց գեղեցիկ արտասանություններով, ոգեշնչող խոսքերով, որ մեզանից յուրաքանչյուրի սրտում նույնպես այդ մոնդ վառվեց, և այդ լուսատու ջահը կայծկլտաց: Եվ թող այդ կայծերը ջահերի վերածվեն և մեզ առաջ տանեն, ու մենք նորից հաղթանակներ տեսնենք:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ



րապես՝ այս Այբուբենի տոնը:

Միջոցառումը սկսվում է փողահարի հիասքանչ հայկական ելևէջներով, որի ներքո՝ արդեն քանիներորդ անգամ բարբառում է փյունիկից վերհառնելու մեր ազգի կամքի հիշողությունը:

Օհօժեռնակը բույն էր շինում,

կա ծանր կացության մեջ հույսով ես պատվում, որ ապագան կորսված չէ, ամեն ինչ դեռ առջևում է, քանզի ունենք նվիրյալ ուսուցիչներ, որոնք սերնդին դաստիարակում են հայրենասիրության, ծնկած տեղից բարձրանալու և պայքարը շարունակելու ոգով:

Եվ դասվար Սուսաննա Բաղասյանի մաղ-

ԲՆՆԱԶԻՋԱՆ

ՄԻԱՆԱԿԱՆ ԲՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՇԻՄԱԿԱՆ ՓՈՒԼ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1 ՊԵՏԱԿԱՆ ՍՏՈՐԵՆՆ ԿՐԻՍՏՈՍԻ Ե ԲՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Լրացուցիչ փուլի մեկնարկը տրվել է հուլիսի 4-ին և կտևի մինչև հուլիսի 9-ը: Քննություններն անց են կացվում քննական մեկ կենտրոնում՝ Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցում: Քննական բոլոր առարկաներից, բացառությամբ ֆիզիկա և ռուսաց լեզու առարկաների, կան հայտագրվածներ: Ամենաշատ հայտերը հայոց լեզու և գրականություն առարկայից են: Հայտագրվել է տասը դիմորդ: Մյուս առարկաներից կան 5-ական դիմորդներ:

Այժմ կոնկրետ արդյունքների մասին թվերով:

ՔԻՄԻԱ

Մասնակցել է 56 հոգի, բացակա չի եղել: Դիմորդները ցույց են տվել հետևյալ արդյունքները.

- 21 հոգի (38%) - 0-7,25 միավոր,
- 17 հոգի (30%) - 7,5-13,75 միավոր
- 12 հոգի (21%) - 14-17,75 միավոր
- 6 հոգի (11%) - 18-20 միավոր:

Առավելագույն միավորներ եղել են 19,5-ը և 19-ը. ստացել են 2-ական դիմորդներ:

Նախորդ տարվա համեմատությամբ 17%-ով ավելացել է 0-7,25 միավորներ ստացած դիմորդների քանակը: 18-20 միավորները կազմել են 30%: Գերազանց միավորները նվազել են 19%-ով: Նախորդ տարի 3 հոգի ստացել է առավելագույն 20 միավոր: Փաստորեն տարբերությունը գերազանցների և բացասական գնահատականների միջև է: Իսկ միջին գնահատականները տոկոսային հարաբերությամբ պահպանվել են:

ՈՒՍԱՑ ԼԵՋՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մասնակցել է 21 դիմորդ, բացակա չի եղել:

- 1 հոգի (5%) - 0-7,25 միավոր
- 14 հոգի (66%) - 7,5-13,75 միավոր
- 5 հոգի (24%) - 14-17,75 միավոր
- 1 հոգի (5%) - 18-20 միավոր

Ամենաբարձր միավորը եղել է 18,5-ը, որը ստացել է 1 հոգի:

Պատկերը նույնն է, ինչ նախորդ տարի: Նույն տոկոսային հարաբերությունն է:

ԱՆՂԵՐԵՆ

143 հայտագրվածներից մասնակցել է 142-ը, որից՝

- 9 հոգի (6%) - 0-7,25 միավոր
- 30 հոգի (21%) - 7,5-13,75 միավոր
- 52 հոգի (37%) - 14-17,75 միավոր
- 51 հոգի (36%) - 18-20 միավոր

1 հոգի ստացել է 20 միավոր, 19,75՝ 2 հոգի: Նախորդ տարվա համեմատությամբ 0-13,75 միավորները տոկոսային հարաբերությամբ նույնն են: Տարբերությունը 14-17,75 միջակայքում է. նախորդ տարի եղել է 45%, հիմա՝ 37%, բայց 18-20 միավոր ստացածները նախորդ տարի 27% էին, հիմա՝ 36%: 9%-ով գերազանցները շատացել են: Բացի դրանից նախորդ տարի 20 միավոր ստացող չի եղել, իսկ այս տարի կա:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Պետք է մասնակցեր 172 դիմորդ, ներկայացել է 169-ը, որից՝

- 39 հոգի (23%) - 0-7,25 միավոր
- 85 հոգի (50%) - 7,5-13,75 միավոր
- 30 հոգի (18%) - 14-17,75 միավոր
- 15 հոգի (9%) - 18-20 միավոր

Առաջընթաց կա: 6%-ով նվազել են 0-7,25 միավորները: Եթե նախորդ տարի 29% են կազմել, ապա այս տարի 23% է: 7%-ով էլ ավելացել են 18-20 միավորները: Բայց միջինը հիմնականում նույնն է մնացել: Նույն ձևով էլ՝ բարձր միավորները. անցյալ տարի ամենից բարձր միավորը 19,25 էր, հիմա ունենք 19,75 միավոր:

Վատ արդյունք չէ:

ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մասնակցել է 322 հոգի՝ 325 հայտագրվածներից: Երեք բացականերից 2-ը հիվանդության պաճառով էին:

- 76 հոգի (24%) - 0-7,25 միավոր
- 152 հոգի (47%) - 7,5-13,75 միավոր
- 70 հոգի (22%) - 14-17,75 միավոր
- 24 հոգի (7%) - 18-20 միավոր

Մեկ հոգի ստացել է 20 միավոր, մեկ հոգի՝ 19,75: 19,5 միավորներ ստացածներ էլ կան: Նախորդ տարվա համեմատությամբ 3%-ով ավելացել է 18-20 միավոր ստացածների թիվը: 0-7,25 միավորները մնացել են նույնը: Ունենք առաջընթաց: Անցյալ տարի 20 միավոր չի եղել, ամենաբարձրը 19,75 միավորն էր: Ընդհանրապես եթե 18-20 միավոր ստացածների քանակն ավելանում է, կարելի է համարել, որ առաջընթաց կա:

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայտագրվել է 93 դիմորդ, մասնակցել է 91-ը, որից՝

- 35 հոգի (38%) - 0-7,25 միավոր
- 25 հոգի (27%) - 7,5-13,75 միավոր
- 21 հոգի (23%) - 14-17,75 միավոր
- 10 հոգի (11%) - 18-20 միավոր

Առաջընթաց ունենք: Եթե նախորդ տարի 0-7,25 միավոր ստացել է դիմորդների 43%-ը, հիմա 38% է, այսինքն՝ անբավարար համարվող գնահատականները 5%-ով պակասել են: Մյուս արդյունքները հիմնականում պահպանվել են: 20 միավոր չկա:

ՀԱՅՈՑ ՊՍՏՈՒԹՅՈՒՆ

Պետք է մասնակցեր 102 դիմորդ, սակայն մասնակցել է 96-ը: Բացակաների թիվը պայմանավորված է նաև նրանով, որ հայոց լեզվից անցումային շեմից ցածր միավորներ ստացած դիմորդները հարկ չեն համարել շարունակել քննությունը Հայոց պատմություն առարկայից: 3 հոգի էլ բացակայել է հիվանդության պատճառով: Այսպիսով՝

- 44 հոգի (46%) - 0-7,25 միավոր
- 32 հոգի (33%) - 7,5-13,75 միավոր
- 15 հոգի (16%) - 14-17,75 միավոր

44 հոգի (46%) - 0-7,25 միավոր ստացել է 0-7,25 միավոր, այս տարի՝ 46%-ը, այսինքն՝ 8%-ով նվազել են ցածր միավորները: Եվ 4%-ով ավելացել են 18-20 միավորները: Նաև ունենք բարձր միավորներ: Նախորդ տարի ամենից բարձրը եղել է 18,5-ը, հիմա կան 19,75, 19,25 միավորներ: Հաշվի առնելով, որ Հայոց պատմությունը բարդ քննություն է (խարսխված է հիշողության վրա, դրա համար էլ բարդ է), համարում ենք, որ առաջընթաց կա:

5 հոգի (5%) - 18-20 միավոր

Եթե նախորդ տարի դիմորդների 54%-ն էր ստացել 0-7,25 միավոր, այս տարի՝ 46%-ը, այսինքն՝ 8%-ով նվազել են ցածր միավորները: Եվ 4%-ով ավելացել են 18-20 միավորները: Նաև ունենք բարձր միավորներ: Նախորդ տարի ամենից բարձրը եղել է 18,5-ը, հիմա կան 19,75, 19,25 միավորներ: Հաշվի առնելով, որ Հայոց պատմությունը բարդ քննություն է (խարսխված է հիշողության վրա, դրա համար էլ բարդ է), համարում ենք, որ առաջընթաց կա:

ՖԻԶԻԿԱ

Պետք է մասնակցեր 47 հոգի, ներկայացել է 42-ը: Բացակաների հիմնական պատճառը մաթեմատիկայից ցածր ստանալն էր: Դիմորդներն անհմատ են համարել ֆիզիկայի քննությանը մասնակցել: Բոլոր բացակաների հարցը ԳԹԿ-ն քննարկել է: Հարգելի պատճառով բացակայողների մի մասը ցանկություն է հայտնել մասնակցել լրացուցիչ փուլին, որոշներն ասել են, որ կմասնակցեն հետակա քննություններին:

- 12 հոգի (29%) - 0-7,25 միավոր
- 19 հոգի (45%) - 7,5-13,75 միավոր
- 9 հոգի (21%) - 14-17,75 միավոր,
- 2 հոգի (5%) - 18-20 միավոր

Այստեղ եթե 0-7,25 միավորները պակասել են 20%-ով, ինչը լավ արդյունք է, ապա 18-20 միավորները պակասել են 5%-ով, իսկ սա այնքան էլ լավ չէ:

Եթե նախորդ տարի եղել են 20, 19,5 միավոր ստացողներ, այս տարի բարձր արդյունքներ այնքան էլ չկան: Ամենից բարձր միավորը 18,5-ն է:

Ընդհանուր առմամբ նույն վիճակն է, ինչ նախորդ տարի. մի քանի տոկոսով ավել կան պակաս: Կա առաջընթաց որոշ առարկաներից, որտեղ 0-7,25 միավոր ստացածների թիվը նվազում է, որոշ առարկաներից ավելացել է 18-20 միավոր ստացողների թիվը: Բայց միջին հաշվով նույն վիճակն է: Առհասարակ սերնդի կրթվածության աստիճանը որոշվում է միջին մակարդակով, որը բոլոր առարկաներից մնացել է նույնը: «Ես չեմ ասի՝ ցածր է: Ցածր է համեմատությամբ մեջ: Միասնական քննությունները գիտելիքի մակարդակի ստուգում չեն: Անգամ թեստերը թեստային պահանջներին չեն համապատասխանում: Դա մրցույթի համար է. ով ավելի բարձր միավոր է ստանում, անցնում է: Այստեղ սկզբունքը՝ բոլորին հավասար պայմաններում, մնում է: Որակի հարցով էլ չենք կարող որոշակի բան ասել: Որակն օրենքով միջին խավով է որոշվում: Եթե միջին մասն ավելի շատ թեքված է դեպի անբավարարները, տվյալ դեպքում՝ 0-7,25 միավորը, չենք ասում, թե վատ է, բայց լավ էլ չէ: Իսկ միասնական քննությունների դեպքում դա էլ ստույգ չէ, քանի որ առկա է շտեմարանների գործոնը: Դիմորդները շտեմարաններն անգիր են անում, իսկ անգիր արածն ամենից շատ մի քանի ամիս է մնում նրանց գլխում: Դրա համար էլ միասնական քննություններով կրթության որակը ստուգել չենք կարող», - ասում է Յու. Քարամյանը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՍՈՒՐԲ ՀԱԿՈՒԲԱԿԱՆՔԻ ՓՈՔՐԻԿ ԴՊԻՐԸ



Արդեն բավականին ժամանակ է, ինչ Հակոբավանքում մատուցվում է Պատարագ, կատարվում են մկրտության և ամուսնության օրհնություններ Տեր Հովհաննես քահանայի ձեռամբ: Այդ ծիսակատարությունների ժամանակ շատերը համոզված կլինեն փոքրիկ Սկրտիչին, որը, չնայած իր փոքր տարիքին, օգնում է քահանային որպես դպիր:

Սկրտիչի ընտանիքն ապրում էր Ռուսաստանի Դաշնությունում, երբ ծնվեց ինքը: Երկու տարի Ռուսաստանում հաճախել է մանկապարտեզ, որից հետո ընտանիքը տեղափոխվում է Հայաստանի Հանրապետություն ու բնակվում Շիրակի մարզի Մանթաշ գյուղում: Այստեղ Սկրտիչը հաճախում է դպրոց, ուսում առնում: 2017թ. ընտանիքը տեղափոխվում է Արցախ և բնակություն հաստատում Շահումյանի շրջանի Դաղիվանք գյուղում:

- Դաղիվանքում շարունակել են ուսումնս մինչև 2020թ. պատերազմը: Դաղիվանքին կարոտում են, միշտ պահում են իմ սրտում: Ես հաճախ եմ մտքերով սավառնում այնտեղ: Իհարկե, դժվար էր գիտակցել, որ այլևս գյուղը չկա, և որ մենք այլևս Դաղիվանքում չենք ապրելու, բայց վերադարձանք Արցախ: Վերադարձանք այն հույսով, որ ամեն ինչ այստեղ լավ է լինելու, և որ մեր վերադարձով կօգնենք քարը քարին դնել ու վերականգնվել:

Ընտանիքը պատերազմից հետո հաստատվել է Քոլատակում, որտեղ Սկրտիչը և եղբայրը՝ Սերգեյը, սկսեցին հաճախել դպրոց ու մասնակցել դպրոցին կից գործող կիրակնօրյա դասերին: Այստեղ Սկրտիչն սկսեց մասնակցել Սուրբ Հակոբավանքում մատուցվող պատարագներին, իսկ որոշ ժամանակ անց անդամագրվեց արդեն որպես դպիր:

- Վաղուց են հետաքրքրվել հոգևորականի կյանքով և, ինչպես մայրս է ասում, ինձ միշտ ձգել է եկեղեցին: Երբ առաջին անգամ մասնակցեցի Պատարագի, մեծ հաճույք ստացա և ցանկացա իմանալ Պատարագի բովանդակությունը, սովորել բոլոր ծիսակատարությունները: Ցանկությունս հայտնեցի Տեր Հովհաննես քահանային: Նա ուրախությամբ ընդունեց իմ ցանկությունը և ինձ թույլ տվեց մասնակցել Պատարագին որպես դպիր, շապիկ հագնել և բարձրանալ խորան: Դա ինձ համար մեծ պատիվ էր, և այսօր մեծ ուրախությամբ եմ կատարում դպիրի իմ պարտականությունները, - ասում է Սկրտիչը և մեզ հետ կիսում իր նպատակները: - Ցանկանում եմ ուսումնս շարունակել Շիրակացու անվան ճեմարանում, լինել հայրենիքին արժանի և նվիրված մարդ: Դեռ ժամանակը ցույց կտա հոգևորական կղանճան, թե՛...

Նանիկ ԱՐԱՍՅԱՆ

ԱՄԵՆԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀՈՐԱԿՐԱՍԱՆԱՏԱՐԸ

ՀՈՒՆԵՐԻ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԵՌՎԻՑ



Երբ փորձում են ինքս ինձ վերլուծել վերջին մի քանի տարիներին մեր երկրում, տարածաշրջանում տեղի ունեցող ռազմական, աշխարհաքաղաքական իրադարձությունները, համոզվում եմ, որ մենք՝ արցախցիներս, կարիք ունենք մարտու, որ մի կողմ կզմի իր անձնական նկրտումները և կփորձի շուրջը համախմբել հասարակության հոծ խմբերին՝ հանուն մեր անկախության պայքարի գաղափարի: Ստորումներս ինձ տարան դեպի անցյալ դարի 90-ականներ: Այդ տարիները բնորոշվում էին որպես հրացույթով պարուրված զարթոնքի տարիներ:

Պայքարի բուրայում բրձված շատ այրեր կային: Սակայն իմ հիշողության խունացող ծալքերից միանգամայն հառնեց Ավոն՝ լեզենդար զորավարը, հայրենիքի իսկական նվիրյալը: Գուցե նրա՞ համար, որ 90-ականների մեր շատ հաղթանակներ կապված են հենց նրա հետ: Գուցե նրա՞ համար, որ մարտկալին իր տեսակով, հայրենիքին նվիրվածությամբ, ժողովրդի մեջ վայելող հեղինակությամբ, քնքուշ հունորով, նուրբ ու ճկուն ռազմավարությամբ գրեթե հավասարը չունեի: Այո՛, Ավոն բացառիկ անձնավորություն էր Արցախյան պայքարի տարեգրության մեջ: Այս բոլորին պատկրվեց նաև այն, որ նա Մարտունու շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարը դառնալուց հետո գրանցվեց իմ հարազատ Եմիշձան գյուղում ու առիթը բաց չէր թողնում՝ լինել գյուղում և հանդիպել, սրտաբաց զրույց ունենալ մարդկանց հետ: (Գրանցման մասին տես Վարդգես Բաղդյան, «Ավոն», 1993թ., էջ 12): Այս տարվա հունիսի 12-ին 30 տարի է դարձել, ինչ Ավոն մեզ հետ չէ: Այդ օրը մեր տարեգրության սևով գրված օրերից մեկն է:

Ես՝ այդ դժնդակ օրվա ռազմական գործողությունների մասնակիցս, նստած գրասեղանի առաջ, փորձում եմ հիշողությանս ծալքերից վեր հանել որոշ մանրամասներ այդ օրվա՝ 1993 թվականի հունիսի 12-ի իրադարձություններից:

Հունիսյան անդորր գիշեր էր: Լիալուսինն իր վեհաշուք տեսքով թափափում էր երկնականարում: Գյուղը խաղաղ միրի մեջ էր: Զինվորատար բեռնատարը երկար ու ահագոյն ազդանշան տվեց: Տազնապ է... Գյուղը մեկնել խլրտաց: Աղմուկը տարածվեց ամենուր: Կանչում էին միմյանց, շտապեցնում: Շատերն իրենց ծնողների, հարազատների ուղեկցությամբ էին ներկայանում: Մտահոգվելու պատճառ կար. առաջին անգամ է, որ պիտի մարտի գնանք: Ուրիշ է, երբ դիրքերում ես, և թշնամին հայտնվում է դիմացդ. արագ կողմնորոշվում ես անելիքի մեջ: Ուրիշ է, երբ թշնամու դիրքի, դասավորվածության, զինուժի մասին տեղեկությունները սուղ են, և համառ մարտերի միջոցով պիտի ստիպել նրան, որ նահանջի, ճողոպրի: Յուրաքանչյուր ընտանիքից մեկ, երկու, նույնիսկ երեք անգամ արդեն տեղ էին գրավել մեքենայի թափքում: Մայրերից շատերը լուռ արտասվում էին, ոմանք զոգնոցների

տակ բաժակով ջուր ունեին պահած, որ օրինակների հետ միասին թափեն շարժվող մեքենայի հետևից, մյուսներն իրենց հայացքներն ուղղել էին Սուրբ Նահատակի կողմը, որն այնպես սիրաբար բազմել է լեռան կատարին՝ պատրաստ խաչակնքելու մինչև նրանց վերադարձը:

1993թ. հունիսի 12-ն էր: Մարտունի-Աղդամ ճանապարհի Աղբուլաղ գյուղի մոտերքը եռուզեռ էր: Տասնյակ հրասայեր, հետևակի մարտական մեքենաներ, սարքավորումներ, հարյուրավոր զինվորներ. այսպիսի մի խմբավորում էր խլրտում ճամփեզրի հեղեղատուն: Ռազմական առաջադրանքն էր՝ ոչնչացնել Մարզիկի և նրա հարակից բնակավայրերի կրակակետերը, որ Բերդաշենի ձորակի գյուղերի համար պատուհաս էին դարձել: Ռազմական այս կարևոր օպերացիայի կազմակերպիչն ու հրամանատարը լեզենդար Ավոն էր, որ կազմած ուներ մարտական գործողությունների հասունացման պլան: Յուրաքանչյուր ոք, սկսած հրամանատարից մինչև շարքային զինվոր, հստակ գիտեր իր անելիքը: Յուրաքանչյուր ռազմական տեխնիկայի անձնակազմ ստացել էր կոնկրետ առաջադրանք:

Արևը դեռ չէր հասցրել իր բոսորագույն գլուխը հանել լեռների թիկունքից, երբ մենք հասանք մարտական առաջադրանքի կատարմանը: Առաջին անակնկալը պատահեց մեր՝ Եմիշձանի վաշտին: 30 հոգի էինք: Բավականին խորացել էինք գյուղում: Թիկունքից մարդատար մեքենայի աղմուկ լսվեց: Շրջվեցինք: Մի «Մուսկվիչ-412» մակնիշի մեքենա դանդաղ մոտենում էր մեզ: Ռազմական գործողությունների գոտում ի՞նչ մարդատար մեքենայի մասին կարող է խոսք լինել: Կա-չկա, թուրք հետախույզներ են: Դիրքավորվեցինք ճանապարհի երկու կողմերում՝ ծառերի հետևում՝ ձեռքներս ինքնաձիգների ձգաններով: Տղաներից Միշան ձեռքով ազդանշան տվեց, որ կանգնի: Մեքենան արգելակեց մեզից մի քանի մետր հեռավորության վրա: Դուրս եկավ զինվորական հագուստով մի երիտասարդ ու հենց դժների մեջ հարցրեց. «Նա օլուբ...»: 30 ձեռք միանգամից սեղմեց ձգանները: Երանք 4 հոգի էին:

Գյուղի հյուսիսային մասում, ուր նորակառույց տներ էին, խիստ կասկածելի մարդկանց ելուստն էր նկատվում: Ավոն, որ հետևում էր մարտական գործողություններին, Աշան գյուղը երիզող լեռնապարից հրամայեց հրասայլերից կրակել այդ տների վրա: Մեր առաջին իսկ կրակոցին ի պատասխան՝ թուրքերը կրակի հեղեղ տեղացին մեր դիրքերի վրա: Երանքը հասցրել էին զարուհի դիրքավորվել մեր թիկունքում ու կրակի օղակի մեջ առնել մեր գունարտակը: Գիտակցելով պահի լրջությունը՝ Ավոն թողեց իր մարտական դիտակետը և շտապեց դեպի վայր՝ տեղում կազմակերպելու մեր անելիքները: Նույն այդ պահին մեր դեմ հայտնվեց թշնամու ԴՄՍ-2-ը: Հակատանկային նռնակով փորձեցինք կասեցնել նրա մարտական գործողությունները (նռնակը նետեց Լևոն Պետանյանը): Մեքենան հասցրեց խուսանավել ու դուրս պրծնել ծուղակից: Նրա դիմաց հայտնվեց Ավոյի ՌԱԶ-ը: Նկատելով թշնամու մարտական մեքենան՝ Ավոն և իր ընկերները դուրս եկան մեքենայից և փորձեցին դիրքավորվել ու ոչնչացնել գրահամեքենան: Մեքենայի արձակած արկի բեկորից մահացու վիրավորվեց լեզենդար Ավոն: Վիրավորվեցին ավտոյում եղած համարյա բոլոր մարտիկները: Հիվանդանոցում մահացավ Սարիբեկը՝ Ավոյի հավատարիմ մարտական ընկերը: Դադարեց բաբախել մի սիրտ, որ այնքան նվիրված էր ժողովրդին, որ այնքան հավատում էր վալիք հաղթանակին...

Ավոն մեկն է այն զորավարներից, որ հայ ժողովրդի ապագան տեսնում էր հենց հայ ժողովրդի ձեռքով կռած: Նա այն զինվորականն էր, որ հեշտությամբ լեզու էր գտնում թե՛ մեծի և թե՛ փոքրի հետ, որ ամենաբարդ պայմաններում էլ չէր կորցնում սառնասրտությունը, ամենախճճված գործից էլ պարզ էլք էր գտնում:

Եթե մի հրաշքով կենդանի լինեի, իր կյանքի 65 տարիների գազաթից (այդ տարիքին մա

կլինեի անցած նոյեմբերին) կնայեի անցած ճանապարհին ու կնտորեր. «Իմ կյանքն, իրոք, անցել է փոթորիկների միջով, և այդ փոթորիկների վերջին խառնարանը եղավ իմ հայրենիքի՝ Հայաստան աշխարհի 10-րդ նահանգ Արցախը: Ես Արցախ մեկնեցի ոչ պատահականորեն և ոչ էլ փախա հետապնդումից: Նախ երդում տված եմ մինչև վերջ պայքարել Հայ Դատի արդարացի լուծման համար: Եվ վերջապես իմ բազմաչափ ժողովրդի բախտը վճռվում էր այնտեղ՝ Ամարասի հովտում, Թարթառի հավերժական կարկաչի երկրում, և իրավունք չունեի թույլ տալ, որ բարբարոս մի թուրք ցեղ ավերի մեր հինավուրց աշխարհը, փորձ փորձի շրջելու մեր պատմության վերջին էջը: Արցախը իմ վերջին հանգրվանը եղավ, պատերազմի վերջին թատերաբեմը, և ես, որպես իմ երկրի զինվոր, ամուր բռնեցի հաղթանակի դրոշը, այնքան ամուր, որ ոչ ոք չհանդգնի խլել ինձանից, մեզանից...»:

Ժողովուրդն ասում է՝ հողը լուր տանող է լինում: Անկասկած, մայր հողը վաղուց է լուր տարել իր փափուկ գրկում հանգզող հայրենասեր զավակին. «Քաջերի ոստան Արցախ աշխարհը բզկավել, վերստին փոթորիկների մեջ է հայտնվել: Արյան գնով նվաճած մեր հող-հայրենիքն, մեր ազատությունը վտանգված է. էլ գերեզմանից, ժողովրդի քո շուրջ քաջագուն զավակներին, ի լուր աշխարհի ազդարարի, որ արցախցին տերն է իր երկրի, և այն ոչ մի գնով ուրիշին չի տա»:

Մի անգամ, երբ սովորական այցով եկել էր գյուղ, հանդիպել գյուղացիների հետ, զրույցի պահին աչքն ընկավ ակունքի ճակատին փակցված մի պատառի: Դրա վրա խոշոր տառերով գրված էր Ե. Չարենցի հայտնի պատգամը. «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Կարգաց բարձրածայն, զոհ ծիծաղեց. «Մենք այնքան հավաքական չենք եղել, ինչպես հիմա: Մի բռուկեք ենք դարձել և արդյունքը տեսնում ենք. ռազմի դաշտում հաղթում ենք մի քանի անգամ գերազանցող թշնամուն»:

Ինչքան լավ կլինեի, որ չարենցյան այս պատգամին հավատարիմ մնա ողջ հայությունը և առաջին հերթին՝ պետական այրերը: Ավոն հրամանատար-ուսուցիչ էր իր ողջ ելությամբ. զինվորին սովորեցնում էր՝ ինչպես կռվել, ինչպես գործել թշնամու դիրքերը, ինչպես պաշտպանվել թշնամու գերակշիռ ուժերի հարձակման դեպքում, ինչպես հետախուզել թշնամու դիրքերը:

Ավոյի մահից անցել էր 1,5 տարի: 1994թ. նոյեմբեր ամիսն էր: Մեր Եմիշձանը պարուրվել էր աշնանային գմայլելի գեղեցկությամբ: Գյուղում արտակարգ եռուզեռ էր: Սպասում էինք ոչ սովորական հյուրերի, որոնք պիտի ժամանեին հեռավոր Ամերիկայից: Ավոյի ծննդյան օրն էր: Ողջ գյուղով պատրաստվում էինք դիմավորել հերոսի հորը, մորը, քրոջը, կնոջը՝ Սեդային: Դեռ բավականին ժամանակ կար մինչև հյուրերի ժամանելը: Ինչ-որ թեթև գործով զբաղված էի այգում՝ տարված մտքերով: Մեքենաների աղմուկը սթափեցրեց ինձ: Դեռ չէի հասցրել դուրս գալ այգուց, երբ մի անծանոթ մարդ արագ քայլերով մոտեցավ մեր բաց դարպասին: Շտապեցի ընդառաջ գնալ.

- Կուզենայի մեկ հայու, գյուղում ապրող հայու բակ մը, բնակարան մը տեսնիլ:

Ո՛ւմ մտքով կանցներ, որ դա Ավոյի հայրն է, որ այդպես հետաքրքրվում է գյուղում ապրող հայի ապրելակերպով: Ես նրան ընդարձակ բակով ուղեկցեցի առաջին հերթին թոնրատուն, բացատրեցի, թե ինչպես ենք հաց թխում: Հետո մտավ տուն, եղավ բոլոր սենյակներում, շրջեց բակում, մտավ այգի: Իմ բացատրություններին պատասխանում էր կամ գլխի դրական շարժումով, կամ կարճ՝ շատ լավ է, աղեկ է: Հյուրասիրեցի թթի օղիով, որից, սակայն, հրաժարվեց: Նա հողաթափերով էր, հասարակ հագուստով: Երբ միասին մտանք ակունք, ասեղ գցելու տեղ չկար: Ավոն ավելի շատ մտն էր հողը: Քույրը բարձրահասակ էր, գեղեցիկ դեմքով, գեղամի հասակով: Ելույթ ունեցավ Ավոյի մայրը, որին ուղեկցում էր

Սեդան: Նա միաժամանակ թարգմանում էր մոր և քրոջ ասածները, որոնք մեծ մասամբ խոսում էին անգլերեն:

- Ավոն դեռ ուսանողական տարիներից էր դատված հայ ժողովրդի ազատագրության գործով: Այդ նպատակով էլ համալսարանն ավարտելուց հետո հեռացավ Ամերիկայից, եղավ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի շատ երկրներում: Մենք կոնկրետ չգիտեինք, թե ինչ էր անում, բայց իմացանք, որ մի քանի անգամ ձերբակալվել ու դատվել էր: Երբ 90-ական թվականներին Արցախում պատերազմ սկսվեց, իմացանք, որ Մոնթեն մեկնել է, Արցախ՝ իր հայրենակիցների հետ միասին կռվելու: Մենք՝ հարազատներս, գիտեինք, որ պատերազմը կարող է ճակատագրական լինել նրա համար, բայց փորձ չարիք նրան հետ պահել: Նաև համոզված էինք, որ չէինք կարող ազդել նրա վրա, երբ գործը հայ ժողովրդի ազատությանն է վերաբերում: Ես հպարտ եմ, որ իմ որդին կռվեց ու զոհվեց մեր ժողովրդի ազատության համար, նաև հպարտ եմ, որ այս երկրամասում մեծ ու փոքր սիրում ու հարգում են նրան... Կեցցե՛ ազատ Արցախը»,- հայերեն ավարտեց իր խոսքը հերոսի մայրը:

Ցավի ու ավիսանքի նշույլ չկար նրա դեմքին: Ու նրա ասածները ոչ միայն հենց այնպես ասելու համար էին, այլև հոգու և գիտակցության արտահայտություն էին: Չգիտեմ, թե մեր հասարակությանը որքանով են հայտնի որոշ մանրամասնություններ Ավոյի՝ Հայաստան գալու մասին: Վերջերս Սուրեն Սարգսյանի «Մի կյանքից ավելի» գրքի շնորհանդեսն էր (ինձացա հեռուստատեսության հաղորդումներով): Գրքում որոշ մանրամասներ կան նաև Ավոյի՝ Հայաստան գալու մասին: Գիրքը նվիրված է խորհրդային հայտնի պետամվտանգուլյան աշխատակից՝ զննապետ Արմեն Սարգսյանին (գրքի հեղինակը Ա.Սարգսյանի որդին է): Ա. Սարգսյանը ոչ միայն պետամվտանգուլյան հայտնի աշխատակից է եղել, այլ նաև աշխատել է Պաշտպանության նախարարությունում: Հայտնի է եղել որպես դիվանագիտական աշխատող: Նաև մշակութային աշխատող էր, հայտնի ջութակահար: Աշխատել է ԱՄՆ-ում՝ որպես ռազմական կցորդ, Զինաստանում՝ դեսպան, նաև ռազմական կցորդ, դեսպան՝ Բուլղարիայում, աշխատել է ԱՖ-դանստանում: ՊԱԿ-ում նրա աշխատանքը բարձր է գնահատվել սառը պատերազմի տարիներին՝ ԽՍՀՄ-հավաքական Արևմուտք հասարակության սրման ժամանակ:

Անցյալ դարի 80-ականների վերջին, երբ սրվեց դարաբարյան հակամարտությունը, պատերազմի ուրվականն արդեն շրջում էր տարածաշրջանում: Այդ լավ էր գիտակցում դիվանագետ Արմեն Սարգսյանը: Անհրաժեշտ էր ռազմական գործին զիտակ մարդկանց բերել Հայաստան: Ա. Սարգսյանն առաջինների թվում կանգ առավ հենց Մոնթե Մելքոնյանի վրա ու կազմակերպեց նրան Հայաստան տեղափոխելու գործը: Ա. Սարգսյանին անձամբ ճանաչում էր նաև Սեդան, որն ուսանող էր Հայաստանում: Դա եղել է 1989թ.՝ ԽՍՀՄ ՊԱԿ-ից նրանց անվտանգությունն ապահովելու համար նախընտրեց թաքցնել Հրազդան, հետո՝ Դիլիջան քաղաքներում:

30 տարիների հեռվից ես ցանկացա հիշողության ծալքերից վեր հանել հուշերի պատահիկներ՝ կապված ինչպես այն չարաբաստիկ օրվա՝ հունիսի 12-ի, այնպես էլ ամենաժողովրդականությունը վայելող գորահրամանատար Ավոյի հետ:

Ավոն իր ելությամբ մտել է մեր ժողովրդի գիտակցության մեջ և կշարունակի ուղեկցել մեզ, քանի դեռ Արցախ աշխարհի երկնակամարը պատած է մուր ու գորշ ամպերով... Եվ որքան հեռանում ենք այն հերոսական օրերից, այնքան ավելի ենք համոզվում նրա մեծության, գորավարական տաղանդի, ժողովրդավարության մեջ, այնքան ավելի ենք գզում նրա ու նրա նմանների անհրաժեշտությունը:

ՇՈՒԹԱՍՏՅԱՆ

ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԵՐՈՍԸ



կախությունը: Ճակատագրի նախախնամությանը դարձրեց, հետո Ստեփանակերտի գյուղատնտեսական ավարտելուց հետո ուսումնառությունը շարունակել է Լիտվայի դեսանտային ուսումնարանում: Ռազմական գիտելիքներ ստանալով՝ երկու տարի ծառայել է Կիրովպարադի դեսանտային զորքերում, կամավոր հաճախել ենթասպայական դասընթացներին:

Ես ինձ ամենաերջանիկը կհամարեի այն մանկավարժներից, որ իրենց հերոս սաների ծննդյան 60-ամյակը շնորհավորելու կգնային ուրախ խնջույքի սեղանի շուրջ, ուր առատորեն հոսում է հայոց գինին, ուր բազում կենացներ են հնչում, ու բարենաղթանքների ծով է ծավալվում:

Ավաղ, ես իմ հերոսի ծննդյան տոնին եմ գնում՝ նրա բացակայության փաստն արձանագրելով:

Այսօր լրացնում եմ մատյանիս էջը՝ նրա անվան դիմաց ոչ թե «բ» նշանակելով, այլ մի հավիտենական ներկայով, մեծ հպարտությամբ ու այն զգացումով, որ նրա նման հերոսները դժվար թե կարողանային կյանքը խնայել հայրենիքի պաշտպանության համար, քանզի հենց դրա՝ համար են ծնվել նրանք:

Ու ձգվում է հիշողությանս անվերջանալի ժապավենը. կադրերում ամենավառ ու քաղցր հուշերն են հաջորդում իրար, ու ասպետն այն օրերի իր պարթև հասակով հառնում է կրկին: Կրկին այն ամոթխած ու զուսպ աշակերտն է, որ, խորագիտակ լինելով իր ժողովրդի պատմության էջերին, մտահոգվում էր նրա ճակատագրով, փորձում իր բաժին անելիքն իրագործել, որ պարտք չմնա իր ժողովրդի առջև: Պրպտում էր ուղիներ, որ իրագործի իր անելիքը, իսկ այդ անելիքի մասին միայն ինքը գիտեր: Թե որքան էր տիրապետում իր գործին, խոսում են փաստերը. նա ընկերներին ու զինվորին խնայող, ռազմական գործին լավ տիրապետող երիտասարդ էր, հմուտ հետախույզ ու նվիրյալ հայրենապաշտպան: Օրը ցերեկով կգնար հետախուզության հորդառատ անձրևի ու քամու պայմաններում՝ բոլորի գարնացական հայացքներին իր հոգու խաղաղությամբ հակադարձելով:

Ասկերանի շրջանի Խնապատ գյուղի ծնունդ է Մարտական խաչ 1-ին աստիճանի ասպետ Արթուր Գալստյանի, հարգանքի ու խոնարհումի արժանի մեկը այն հայ մտավորականներից, որոնք Արցախի համար օրհասական պահերին առանց երկմտելու գրչի փոխարեն գեղեցիկ առանձնապատկերներով հայրենի տունն ու նրա սահմանները, հայ ազատ կամքն ու հայրենիքի անվերջ անհատական սերունդը որդու հետ կապված ամեն մի դեպք, ամեն լուսանկարի պատմություն: Տեղը տեղին՝ բոլոր մանրամասնություններով:

Մեծ, շատ մեծ է մայրական անհատական սերունդը որդու համրեպ: Ասում են՝ մայրական սերը զորեղ է ամեն ինչից, բայց այս դեպքում այն ի գորու էր փրկել որդուն, որը գիտակցորեն ընտրեց անմահության

ծանապարհը: Մայրական սրբության բացահայտումն էլ դարձան այն հուզիչ երգերը՝ «Մոր երգը որդուն», «Ներքի ինձ, մայրիկ», «Հայրենիքը մոր պես աղոթում է», որ հնչեցին դպրոցի շնորհալի սան Ադա Մանգասարյանի ու նրա ընկերուհիների շուրթերից և գերեցին ներկաներին:

1992թ. հունիսի 12-ին էր. ճակատագրական այդ օրը ոտիք լայնամասշտաբ հարձակում սկսեց հայրենի գյուղի ուղղությամբ: Ռազմական գիտելիքներն օգնեցին նրան՝ հասկանալու, որ Արցախի երկնքում պատահական չեն հայտնվել սև գիշերայինները... Շտապեց գորանց, գեղեցիկ ու գրահ առավ ու թռավ... Թռավ դեպի հավերժություն: Խնայելով ընկերներին, որ նաև իր սաներն էին, նետվեց առաջ, խոցեց առաջին տանկը, կասեցրեց թշնամու առաջխաղացումը, որը փորձեց ուրիշ ճանապարհով գյուղ հասնել, սակայն այստեղ էլ իր տեղադրած ականները գործեցին, երբ ինքն այլևս չկար... համարել էր հերոս նահատակների շարքը:

Նա անմահության ճանապարհը բռնեց, երբ ընդամենը չորս օր անց՝ հունիսի 16-ին, դառնալու էր 29 տարեկան:

31 երկար ու ձիգ տարիներ անց դառնում են ներկա մարտական ընկերներից Կառլեն Մայիլյանը, դպրոցի տնօրեն Լյուդմիլա Մուսիյանը, նախկին տնօրեն Ջավեն Բեգլարյանը, դասղեն Սուրայա Ղազարյանը (տողերիս հեղինակը) փորձում են կերտել հերոսի նկարագիրը՝ կոչ անելով մատաղ սերնդին՝ լավ սերտել պատմության դասերը, առաջնորդվել նրանց նախաձեռն ուղիով, քանի որ Արցախը չեն է մնալու միմիայն նվիրյալների շնորհիվ:

Արթուրի համար Արցախը ոչ միայն բնօրրան էր, ուր իրենց տոհմածառի արմատներն են խորունկ ձգված, ու քաջ նախնիների շիրիմներն են հզորացնում սուրբ հողը, այլև ասպետի, հարատևելու ներշնչանքի աղբյուր, մոր պես կաթոգին, զավակի պես սիրատուն: Նրա համար ամեն ինչից վեր և ամեն ինչից առաջ հայրենիքի ճակատագիրն էր:

Երբ հրետակոծվում էր հարազատ գյուղը, և ռազմածրեք չկար, Արթուրի պրպտումն միտքը էլ էր որոնում փրկության ու պաշտպանության համար: Նա հաճախ էր հայտնվում թույլատրելի ռիսկի ամենավերջին սահմանին: Գյուղի հոգին էր խնամում հասնող իր խիզախու-

թյամբ: Համոզված էր ու հանձնարում էր բոլորին, որ հաղթանակի գրավականը ոչ թե ռազմական հզոր տեխնիկան է ու մեծածախով բանակը, այլ մարտնչող ոգին ու նվիրումը:

Հայրենասիրության նրա վերջին, բայց և հավերժական դասը սերունդներին իր երիտասարդ կյանքի գոհաբերումն էր հանուն Հայրենյաց, որն էլ դարձավ Արցախյան հերոսամարտի պատմության սրբատառ էջերից մեկը:

Հայրենիքը բարձր գնահատեց նվիրյալ զավակի հերոսությունը ու շնորհեց նրան «Մարտական խաչ 1-ին աստիճանի» շքանշանի ասպետի կոչումը: Հարազատ կրթօջախն էլ 1997թ. մայիսի 31-ին անվանակոչվեց նրա անունով:

Արթուրը և նրա նման հազարավոր մարտիկներ արժանացել են «Հերոս ազատամարտիկ» հավերժական կոչման, և հաղթական դափնիներն էլ պիտի հավերժորեն պսակեն նրանց սուրբ շիրիմները:

Այսօր կրկին մարդաշատ է հարազատ կրթօջախի Փառքի սրահը. էկրանից ժպտում է Արթուրը, վառվում են մոմերը, հնչում են երախտագիտության խոսքերը, սակայն բացակայում է այն մեծ ծննդյան տորթը, որը կտրելու պատիվը Արթուրին էր տրվելու, բացակայում է հորեկայրը, որը հանգստացրել էր տորթի վրա վառվող տոնակա մոմերը...

Ցավալիորեն այստեղ չէ նաև նրա ընտանիքը. երկու որդիները՝ Արսենն ու Տիգրանը, և կինը՝ Ռայան, գտնվում են Ռուսաստանի Ղաշնուքյունում: Հավանաբար այնտեղից են հետևում ծավալվող իրադարձություններին:

Սիրելի՛ Արթուր, իմ հերոս սան, շնորհավոր երկնային ծնունդդ, ինչ լավ կլինեք, որ վայելեիր կյանքիդ իմաստնալից տարիքը ու իմանայիր, թե որքան ենք սիրում քեզ:

Ամեն անգամ քո մասին խոսելիս բառերը շայտկում են հոսում են մտքիս լայնահուն գետով, ու ինչքան փորձում եմ դրանցով մեղմել հոգուս ցավը, սրտիս ճիչը, չի ստացվում: Դու մեր ցավն ես ամենկին:

Դու մեզ համար դարձել ես չսպիացող մի խոր վերք, որն անընդհատ արմատանում է ու չի փակվում:

Մարտի 13-ին Ալաշկերտ գյուղում: Մեծանում էր Ողջի գետի հովտում: Ավագ եղբոր ու իրենից փոքր քրոջ հետ նաև հորն էր օգնում այգիներ հիմնելիս: Շատ էր սիրում իր ծննդավայրը: Սակայն եղավ 44-օրյա պատերազմը: Հայրը մարտադաշտում էր: Ինչպես Արցախի շատ բնակավայրեր, Ալաշկերտն ու Մուշն էլ 2020թ. հոկտեմբերի կեսերին անցան թշնամու տիրապետության տակ: Հասցրել էին գյուղից հեռանալ՝ այնտեղ թողնելով տուն ու այգի, ունեցվածք, և ամենացավալի՝ հայրենիք ու մանկություն: Այժմ նրանց ընտանիքը բնակվում է Արարատի մարզի Մասիս քաղաքում: Տիգրանը սովորում է Մասիսի Կահրան Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի 6-րդ դասարանում: Նաև նույն քաղաքի Առնո Բաբայանյանի անվան երաժշտական դպրոցի վոկալի բաժնի 3-րդ դասարանի սան է: Գոհ է վոկալի ուսուցչուհուց՝ Լուսինե Կոբայանից, որը սիրով է աշխատում իր հետ: Չուզահեռ հաճախում է Արմեն Նազարյանի անվան սպորտի դպրոց՝ պարապելով սամբո մարզաձև: Մասնակցել է սամբոյի մրցումների, արժանացել պարգևների: Սակայն Տիգրանի համար առաջնայինը երգարվեստն է: 2022-ին Տիգրանը ձայնագրեց իր առաջին երգը՝ «Այս, Նարե, Նարե» ժողովրդականը, իսկ այս տարի՝ երգանկահիշատակ Սոսի համիկյանի խոսքերով գրված Սակախա Մարտի երգիչ: Սիրում է հիմնականում զուսմանական, ժողովրդական, էստրադային երգերը, հոգեհարազատ են նաև ռազմաօդային երգերը: Սիրված երգիչներից է Ռուբեն Մաթևոսյանը: Սիրով է լսում հաշատուր Ավետիսյանի երգերը: Ծնողները սիրով աջակցում են, որ Տիգրանը հասնի երազանքների կատարմանը, ու հավատում են, որ ոչ հեռու ասպագայում բոլորն են լսելու նրա երգերը:

Մարտի 13-ին Ալաշկերտ գյուղում: Մեծանում էր Ողջի գետի հովտում: Ավագ եղբոր ու իրենից փոքր քրոջ հետ նաև հորն էր օգնում այգիներ հիմնելիս: Շատ էր սիրում իր ծննդավայրը: Սակայն եղավ 44-օրյա պատերազմը: Հայրը մարտադաշտում էր: Ինչպես Արցախի շատ բնակավայրեր, Ալաշկերտն ու Մուշն էլ 2020թ. հոկտեմբերի կեսերին անցան թշնամու տիրապետության տակ: Հասցրել էին գյուղից հեռանալ՝ այնտեղ թողնելով տուն ու այգի, ունեցվածք, և ամենացավալի՝ հայրենիք ու մանկություն: Այժմ նրանց ընտանիքը բնակվում է Արարատի մարզի Մասիս քաղաքում: Տիգրանը սովորում է Մասիսի Կահրան Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի 6-րդ դասարանում: Նաև նույն քաղաքի Առնո Բաբայանյանի անվան երաժշտական դպրոցի վոկալի բաժնի 3-րդ դասարանի սան է: Գոհ է վոկալի ուսուցչուհուց՝ Լուսինե Կոբայանից, որը սիրով է աշխատում իր հետ: Չուզահեռ հաճախում է Արմեն Նազարյանի անվան սպորտի դպրոց՝ պարապելով սամբո մարզաձև: Մասնակցել է սամբոյի մրցումների, արժանացել պարգևների: Սակայն Տիգրանի համար առաջնայինը երգարվեստն է: 2022-ին Տիգրանը ձայնագրեց իր առաջին երգը՝ «Այս, Նարե, Նարե» ժողովրդականը, իսկ այս տարի՝ երգանկահիշատակ Սոսի համիկյանի խոսքերով գրված Սակախա Մարտի երգիչ: Սիրում է հիմնականում զուսմանական, ժողովրդական, էստրադային երգերը, հոգեհարազատ են նաև ռազմաօդային երգերը: Սիրված երգիչներից է Ռուբեն Մաթևոսյանը: Սիրով է լսում հաշատուր Ավետիսյանի երգերը: Ծնողները սիրով աջակցում են, որ Տիգրանը հասնի երազանքների կատարմանը, ու հավատում են, որ ոչ հեռու ասպագայում բոլորն են լսելու նրա երգերը:

Մարտի 13-ին Ալաշկերտ գյուղում: Մեծանում էր Ողջի գետի հովտում: Ավագ եղբոր ու իրենից փոքր քրոջ հետ նաև հորն էր օգնում այգիներ հիմնելիս: Շատ էր սիրում իր ծննդավայրը: Սակայն եղավ 44-օրյա պատերազմը: Հայրը մարտադաշտում էր: Ինչպես Արցախի շատ բնակավայրեր, Ալաշկերտն ու Մուշն էլ 2020թ. հոկտեմբերի կեսերին անցան թշնամու տիրապետության տակ: Հասցրել էին գյուղից հեռանալ՝ այնտեղ թողնելով տուն ու այգի, ունեցվածք, և ամենացավալի՝ հայրենիք ու մանկություն: Այժմ նրանց ընտանիքը բնակվում է Արարատի մարզի Մասիս քաղաքում: Տիգրանը սովորում է Մասիսի Կահրան Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի 6-րդ դասարանում: Նաև նույն քաղաքի Առնո Բաբայանյանի անվան երաժշտական դպրոցի վոկալի բաժնի 3-րդ դասարանի սան է: Գոհ է վոկալի ուսուցչուհուց՝ Լուսինե Կոբայանից, որը սիրով է աշխատում իր հետ: Չուզահեռ հաճախում է Արմեն Նազարյանի անվան սպորտի դպրոց՝ պարապելով սամբո մարզաձև: Մասնակցել է սամբոյի մրցումների, արժանացել պարգևների: Սակայն Տիգրանի համար առաջնայինը երգարվեստն է: 2022-ին Տիգրանը ձայնագրեց իր առաջին երգը՝ «Այս, Նարե, Նարե» ժողովրդականը, իսկ այս տարի՝ երգանկահիշատակ Սոսի համիկյանի խոսքերով գրված Սակախա Մարտի երգիչ: Սիրում է հիմնականում զուսմանական, ժողովրդական, էստրադային երգերը, հոգեհարազատ են նաև ռազմաօդային երգերը: Սիրված երգիչներից է Ռուբեն Մաթևոսյանը: Սիրով է լսում հաշատուր Ավետիսյանի երգերը: Ծնողները սիրով աջակցում են, որ Տիգրանը հասնի երազանքների կատարմանը, ու հավատում են, որ ոչ հեռու ասպագայում բոլորն են լսելու նրա երգերը:

Մարտի 13-ին Ալաշկերտ գյուղում: Մեծանում էր Ողջի գետի հովտում: Ավագ եղբոր ու իրենից փոքր քրոջ հետ նաև հորն էր օգնում այգիներ հիմնելիս: Շատ էր սիրում իր ծննդավայրը: Սակայն եղավ 44-օրյա պատերազմը: Հայրը մարտադաշտում էր: Ինչպես Արցախի շատ բնակավայրեր, Ալաշկերտն ու Մուշն էլ 2020թ. հոկտեմբերի կեսերին անցան թշնամու տիրապետության տակ: Հասցրել էին գյուղից հեռանալ՝ այնտեղ թողնելով տուն ու այգի, ունեցվածք, և ամենացավալի՝ հայրենիք ու մանկություն: Այժմ նրանց ընտանիքը բնակվում է Արարատի մարզի Մասիս քաղաքում: Տիգրանը սովորում է Մասիսի Կահրան Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի 6-րդ դասարանում: Նաև նույն քաղաքի Առնո Բաբայանյանի անվան երաժշտական դպրոցի վոկալի բաժնի 3-րդ դասարանի սան է: Գոհ է վոկալի ուսուցչուհուց՝ Լուսինե Կոբայանից, որը սիրով է աշխատում իր հետ: Չուզահեռ հաճախում է Արմեն Նազարյանի անվան սպորտի դպրոց՝ պարապելով սամբո մարզաձև: Մասնակցել է սամբոյի մրցումների, արժանացել պարգևների: Սակայն Տիգրանի համար առաջնայինը երգարվեստն է: 2022-ին Տիգրանը ձայնագրեց իր առաջին երգը՝ «Այս, Նարե, Նարե» ժողովրդականը, իսկ այս տարի՝ երգանկահիշատակ Սոսի համիկյանի խոսքերով գրված Սակախա Մարտի երգիչ: Սիրում է հիմնականում զուսմանական, ժողովրդական, էստրադային երգերը, հոգեհարազատ են նաև ռազմաօդային երգերը: Սիրված երգիչներից է Ռուբեն Մաթևոսյանը: Սիրով է լսում հաշատուր Ավետիսյանի երգերը: Ծնողները սիրով աջակցում են, որ Տիգրանը հասնի երազանքների կատարմանը, ու հավատում են, որ ոչ հեռու ասպագայում բոլորն են լսելու նրա երգերը:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆԸ՝ ԲՆՇԱԹՄԱՐԻ ԱՆՆԿԵՐՑ ԳՅՈՒՂԻՑ



Մարտի 13-ին Ալաշկերտ գյուղում: Մեծանում էր Ողջի գետի հովտում: Ավագ եղբոր ու իրենից փոքր քրոջ հետ նաև հորն էր օգնում այգիներ հիմնելիս: Շատ էր սիրում իր ծննդավայրը: Սակայն եղավ 44-օրյա պատերազմը: Հայրը մարտադաշտում էր: Ինչպես Արցախի շատ բնակավայրեր, Ալաշկերտն ու Մուշն էլ 2020թ. հոկտեմբերի կեսերին անցան թշնամու տիրապետության տակ: Հասցրել էին գյուղից հեռանալ՝ այնտեղ թողնելով տուն ու այգի, ունեցվածք, և ամենացավալի՝ հայրենիք ու մանկություն: Այժմ նրանց ընտանիքը բնակվում է Արարատի մարզի Մասիս քաղաքում: Տիգրանը սովորում է Մասիսի Կահրան Բաբայանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի 6-րդ դասարանում: Նաև նույն քաղաքի Առնո Բաբայանյանի անվան երաժշտական դպրոցի վոկալի բաժնի 3-րդ դասարանի սան է: Գոհ է վոկալի ուսուցչուհուց՝ Լուսինե Կոբայանից, որը սիրով է աշխատում իր հետ: Չուզահեռ հաճախում է Արմեն Նազարյանի անվան սպորտի դպրոց՝ պարապելով սամբո մարզաձև: Մասնակցել է սամբոյի մրցումների, արժանացել պարգևների: Սակայն Տիգրանի համար առաջնայինը երգարվեստն է: 2022-ին Տիգրանը ձայնագրեց իր առաջին երգը՝ «Այս, Նարե, Նարե» ժողովրդականը, իսկ այս տարի՝ երգանկահիշատակ Սոսի համիկյանի խոսքերով գրված Սակախա Մարտի երգիչ: Սիրում է հիմնականում զուսմանական, ժողովրդական, էստրադային երգերը, հոգեհարազատ են նաև ռազմաօդային երգերը: Սիրված երգիչներից է Ռուբեն Մաթևոսյանը: Սիրով է լսում հաշատուր Ավետիսյանի երգերը: Ծնողները սիրով աջակցում են, որ Տիգրանը հասնի երազանքների կատարմանը, ու հավատում են, որ ոչ հեռու ասպագայում բոլորն են լսելու նրա երգերը:

Զոհրաբ ԸՈՒԹՅԱՆ

ՄԵՐ ԳՈՐԾԵԼՆԿԵՐԸ

«ԴԻՉԱԿ ԱՅՅՈՒՄ»-Ը՝ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ



Շրջափակման ավելի քան 200 օրվա ընթացքում Արցախի տնտեսությունը մեծ վնասներ է կրել: Լրիվությամբ կանգնեցված են շինարարությունը, հանքարդյունաբերությունը, մի շարք ոլորտներ աշխատում են ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ: Ըստ տեղեկատվական շտաբի մինչև հունիսի 15-ը տվյալների՝ ավելի քան 860 տնտեսվարող սուբյեկտներ (ընդհանուր՝ 20,1%), շրջափակման պայմաններում աշխատելու անհնարինության պատճառով կասեցրել են իրենց գործունեությունը, իսկ մնացածները գործում են մասնակի ծավալով կամ պետական աջակցությամբ: Շրջափակման և կենսական ենթակառուցվածքների խափանման պատճառով փաստացի աշխատանքը և եկամտի աղբյուրը կորցրել է նախնական հաշվարկներով շուրջ 10.900 մարդ (ներառյալ՝ պետական աջակցությամբ աշխատատեղի ժամանակավոր պահպանման դեպքերը, որ մասնավոր հատվածում աշխատողների 50%-ից ավելին է):

Մենք այս շրջանակում հետաքրքրվեցինք, թե ինչպիսին է վիճակը «Լուսարար»-ի գործընկեր՝ Արցախում տպագրական գործունեությունը իրականացնող «Դիզակ պլյուս» ընկերությունում:

Տնօրեն Դավիթ Բեգլարյանը մեզ հետ զրույցում ասաց, որ աշխատանքների ծավալը նվազել է 5-6 անգամ, բայց ոչ մի աշխատողի չեն կրճատել: Պետությունը երկու անգամ աջակցել է աշխատավարձերի տրաման հարցում: Գործերը պակասելուց բացի այլ լուրջ խնդիրներ էլ կան: Դրանցից ամենախարկոըրը էլեկտրաէներգիայի հարցն է: Տպարանն աշխատում է եռաֆազ հոսանքով, երրորդ ֆազի միացումը հնարավոր է միայն գիշերը: Աշխատողների մի մասը անցել է գիշերային ռեժիմի: Գիշերվա ժամը 12-ին գալիս են աշխատանքի, առավոտ-

րով չեն վճարում»: «Դիզակ պլյուս»-ը Արցախում միակ տպարանն է, որը տպագրության բոլոր ձևերով զբաղվում է, ընդ որում, այն նաև թերթ տպագրող (սև-սպիտակ, թե գունավոր) միակ տպարանն է արդեն շուրջ երկու



տասնամյակ: Մինչև վերջին տարիներս Արցախում 4-5 տպարան կար, իսկ մինչև 2020թ. պատերազմը՝ երեք, որոնցից մեկը գրանցված էր Արցախում, բայց գործունեություն էր իրականացնում Երևանում: Մասնակցում էր մրցույթներին, տե-

ցակցության մի օրինակ է բերում նա: Այդ տպարանները 2020թ. պատերազմից հետո հեռացել են Արցախից: Այսօր ասպարեզում միայն «Դիզակ պլյուս»-ն է՝ իր երկու մասնաճյուղերով, որոնցից մեկը Վազգեն Սարգսյան փողոցում է, մյուսը՝ Ազատամարտիկների:

«Այն լավ ժամանակներում գուցե կարելի էր աչք փակել նման երևույթի վրա», - փորձում են մրցակիցների քայլերն արդարացնել: «Լավ ժամանակներում մենք քիթ սրբելու ժամանակ էլ չենք ունեցել, - մենք էլ Երևանից էինք պատվեր ստանում», - ասում է տնօրենը: «Բայց չէ՞ որ Երևանում, Ստեփանակերտի հետ համեմատած, գործն ավելի էժան է արվում, ինչպես նաև համաձայնվել էժանը թողած՝ թանկ վճարել»: Տպարանի տնօրենն այս հարցին ի պատասխան՝ ասաց, որ հարկաչինի թղթերով էլ ինքը կարող

ուզում ենք, որ ամբողջ աշխարհը մեզ օգնի, մինչդեռ զլանում ենք պետական բյուջե փող մտցնել: Բայց չէ՞ որ դրանից են գոյանում աշխատավարձերը, թոշակները, նպաստները և այլն: Հիմա ժամանակներն ուրիշ են. ոչ թե պետք է մտածել հարստանալու մասին, այլ կարողանալ գոյատևել»:

Առանց նոր հումք ստանալու տպարանն ինչքա՞ն ժամանակ կկարողանա գոյատևել: Այս հարցին Դ. Բեգլարյանը պատասխանեց, որ տասը տարվա պահեստավորված ապրանք են ունեցել, որն այս վեց ամիսների ընթացքում օգտագործել են. «Մեր պահեստում ապրանքներ ունեցինք, որ թափելու ենթակա էին, բայց դրանք էլ ենք վերանշակել, արտադրության մեջ դրել: Պետությունն ի վիճակի չէ մեզ աջակցել: Հասկանում ենք, որ առաջնահերթը սնունդն է, վառելիքը, հետո նոր՝ թուղթը: Լրագրային թուղթը վերջացել է: Ճգնաժամի մեջ ենք, չգիտեմ ինչպես պետք է բերենք: Կես տոնամուց զվանափաթեթով (ռուսերեն) թուղթ ծանր ապրանք է, դժվար է բեռնել ու տեղափոխել: Ստիպված ենք առայժմ յուրազանց սպիտակ թղթով, որը կրկնակի թանկ է նստում տպագրության վրա: Իմ գերխնդիրը հիմա գոնե աշխատողներին աշխատավարձով ապահովելն է թեպետ այսքան դժվարությունների գնով: Այլպես դժվար կլինի վերականգնելը»:



և ապացուցել, որ թանկ չեն անում գործը. «Ես «Ջերմուկ»-ի պիտակներ են տպագրել այդ գործարանի համար՝ 1-2 միլիոն հատ: Թանկ են անում, բայց ինձ ե՞ն տալիս գործը: Մարդու ցանկությունն է՝ գործ անի ինձ հետ, թե՛ ոչ: Ես 22% հարկ են տալիս: Ասեմք, մեկ միլիոն դրամի գործ է՞մ արել, դրանից 220 հազարը հետ տալիս են պետությանը: Եթե Հայաստանում 900 հազար դրամով են անում գործը, միևնույն է, դու հարկ չես մուծում Արցախի բյուջե: Ցանկացած պետության նպատակն է, որ իր գումարները իր ներսում գոնե մեկ անգամ շրջանառվեն: Մենք

տուն շինարարությունը, հանքարդյունաբերությունը. «Միշտ էլ պետությունը մեզ աջակցել է, երկու անգամ պահանջված չափով վարկ ենք ստացել, որը փակել ենք տոկոսներով համոզեցին: Միշտ բարեխղճորեն աշխատել ենք ու կշարունակենք աշխատել: Դա նաև արժանապատվության հարց է: Արցախում ապրելը, իրոք, հերոսություն է, և անեն մարդ պետք է իր բնագավառի հերոսը լինի: Մենք կհաղթենք միայն այսկերպ»:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ



բերելը. ամեն ինչ չէր ստացվում բերել առաջվա նման: Բացի դրանից, նախքան շրջափակումը ապրանքը Երևանում ապառիկ էին տալիս, հիմա՝ ոչ. «Ապրանքը բերում էինք, մեկ ամիս հետո գումարը մարում: Հիմա ասում են՝ կամիսիկ փողը տուր, ապրանքը տար: Իսկ պետական հիմնարկներ կան, որոնց պատվերները կատարում ենք, բայց ամիսներ

դերներ շահում: Դրա մասին արտահայտվելիս «Դիզակ»-ի տնօրենի խոսքում դժգոհության շեշտեր էին զգացվում. «Միշտ պատկան մարմինն ասում էի՝ զննեք տեսք, թե սեք՝ նա ի վիճակի՞ է, արդյոք, այդ գործն անել Արցախում, երբ այստեղ ոչ սարքավորումներ ունի, ոչ աշխատողներ», - անբարեխիղճ մր-

Հնորհանդես

Օրերս Հայաստանի գրողների միությունում տեղի ունեցավ Գրողների արցախյան միավորման (ԳԱՄ) յոթ անդամների՝ Արիս Արսենի, Ռոբերտ Եսայանի, Ջինաիդա Բալայանի, Ժաննա Բեգլարյանի, Դավիթ Միքայելյանի, Մարտիրոս Որբենցու և Անահիտ Քոչարյանի գրքերի շնորհանդեսը:



վամբ նշել է մատենաշարի հեղինակներից Ռոբերտ Եսայանը, շրջափակումը ճեղքվում է մշակույթով: Անկասկած, ոչ մի պարագայում գրականությունը չպետք է միրի: Այն իր առաքելությանը հավատարիմ՝ պի-

տի արթուն պահի պայքարի ոգին ու ոգեշնչի ժողովրդին:

Ինչպես «Լուսարար»-ին տեղեկացրին Գրողների արցախյան միավորումում, նախատեսվում է մատենաշարի արցախյան շնորհանդեսը կազմակերպել այս ամառվա ընթացքում: Մեզ միաժամանակ տեղեկացրին, որ մինչև տարեվերջ նախատեսվում է միավորման անդամ մի խումբ գրողների արձակ գործերը պատշաճ



կերպով ներկայացնել արտերկրում, որի թարգմանական աշխատանքներն արդեն իսկ ընթացքի մեջ են: Այլ մանրամասներ մեզ չհայտնեցին, սակայն խոստացան ԳԱՄ-ի նոր նախաձեռնությունների մասին հանրային իրազեկումն անպայման պա-

հովել: Ավելացնենք, որ մատենաշարի հրատարակումը հովանավորել է «Լուսաբեր» հիմնադրամը՝ Հայաստանի գրողների միության հետ համագործակցությամբ, իսկ տպագրությունն իրականացրել է Երևանում գործող «Ծիծեռնակ» գրահրատարակչությունը:

Հնորհանդեսի հեղինակներին և նրանց մարդուն ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Սեֆ. Լրատվություն

ՄԵՆԱԿՈՒՅԹԸ ՃԵՂԵՈՒՄ Ե ԾՐՋԱՓԱԿՈՒՄԸ

ԲԱՆԵՐԵՆ

ԽՈՍՔԻ ՄԱՐՏԱԴԱՇՏՈՒՄ

Ասունքի հանրապետական փուլին ներկայացել էին շրջանային (քաղաքային) փուլում հաղթողները: Մասնակիցներն ընտրել էին Վ. Հակոբյանի հայրենասիրական բանաստեղծությունները, որոնք ներկայանալին նորից մոտեցրին մեր ակունքներին, որոնց գերին ենք մենք, նվիրյալը, և որը սրբացված է բազում հերոսների թանկ արյունով:

Ստեփանակերտի, Մարտունու, Ասկերանի, Մարտակերտի, Հաղորթի, Շուշիի շրջանների պատանի ասունքողներին, ուսուցիչներին, գնահատող հանձնախմբին, ներկայանալին միավորել էր Վ. Հակոբյանի ստեղծագործությունների յուրովի մեկնաբանումը Արցախի ներկա իրավիճակի խորապատկերին:

Ուրախալի էր ասունքողների խմբում տեսնել տղաների

ուսուցիչների վաստակի արդյունքն է: Նա, որ սիրում է ասունքել և կատարել ազգագրական երգեր, ընդմիջմանը ներկայանալին խնդրանքով կատարեց «Ղարաբաղի հորովել» երգը՝ ոգևորելով բոլորին:

Հանձնախմբի նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Զինաիդա Բալայանը, ամ-

չափ: Դառնանք՝ շնորհակալություն ասենք հայոց մայրերին, որ այսպիսի սերունդ է ծնունդ, Արցախա հողին, որ այսպիսի երեխաներ է մեզ պարզել, դառնանք շնորհակալություն հայտենք մեր երկրին, որ աշխարհի բնին է մնացել, բայց մարտել չի լինի:

Այսօր նորից մենք մարտադաշտում ենք, խոսքի մարտադաշտում...

Քանի որ մրցույթ է, ուրեմն, պետք է նաև հրապարակվեն արդյունքները: Բայց ակնհայտ էր, որ անկախ արդյունքներից, բոլորն էին հաղթող, քանզի Վ. Հակոբյանի տողերով նրանք ներառվում էին ապրելու, մաքառելու, հաղթելու կամք և վճռակամություն:

Իսկ որպես մրցույթի արդյունք՝ ԱՀ ԿԳՄՍՆ պատվոգրերով և հուշանվերներով պարգևատրեցին 1-3-րդ մրցանակային տեղեր գրաված մասնակիցները:

Պատվավոր 1-ին տեղին արժանացավ Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի աշակերտ Արսեն Պետրոսյանը:

2-րդ մրցանակը Ասկերանի շրջանի Նորագյուղի միջնակարգ դպրոցի աշակերտ Նարեկ Բաբայանին էր:

3-րդ մրցանակը տրվեց Ասկերանի շրջանի Աստղաշենի ժամ Անդրյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտուհի Լիա Ավանեսյանին:

Մրցանակային հանձնաժողովը պատվոգիր էր նախատեսել նաև ինքնանույն ելույթի համար, որին արժանացավ Ստեփանակերտի Յուրի Պողոսյանի անվան հ. 6 հիմնական դպրոցի աշակերտ Գոռ Հայրապետովը:

Մրցանակները հանձնեց ԱՀ ԿԳՄՍՆ նախագահության պատրաստության և արտադրողական ծրագրերի վարչության պետ Ստեփան Օհանջանյանը:

«Գրիգոր Նարեկացի» համալսարանի ղեկավարությունը նվերներ էր պատրաստել բոլոր մասնակիցների համար, որը հանձնեց պրոֆեսոր Իրինա Հակոբյանը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Շնորհավորանք ՌԻՍՈՒՅՉԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂԻՂ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ Ե ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻՆ



Մանկավարժությունն առաքելություն է, հետո նոր՝ մասնագիտություն: Երբեմն առաքելությունը հաղթում է մասնագիտությանը: Սերունդներ կրթելու պատասխանատու գործը Ռուզաննա Սողոմոնյանը կատարում է առանձնակի սիրով ու նվիրումով: Գիտելիքները, որ տալիս է սաներին, նրանցից յուրաքանչյուրի՝ որպես անհատի ձևավորման ու կայացման հիմնաքարն է:

Ռուզաննա Սողոմոնյանը ծնվել է 1963թ. հուլիսի 4-ին Ստեփանակերտում: Ավարտելով թիվ 9 միջնակարգ

դպրոցը՝ ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «Ընդհանուր տեխնիկական բաժին»-ը: 1996 թվականից աշխատում է Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 դպրոցում՝ որպես տեխնոլոգիայի ուսուցչուհի: Նրա գործն աղջիկների հետ է, որն ունի մեկ այլ նշանակություն: Այն կապված է դժվարությունների և խնդիրների հետ: Սակայն տիկին Սողոմոնյանի քրտնաջան աշխատանքի շնորհիվ այդ ամենը հաղթահարվում է հեշտությամբ: Նրա աշակերտները դասապրոցեսին ապրում են ուրախության զգացում, բարոյական բավարարվածություն, նպատակին հասնելու ձգտում, հետաքրքրություն: Նրանք աստիճանաբար ծանոթանում են ինքնուրույն աշխատանքին, աշխատողների գործունեության տարբեր ոլորտներին, տեղեկացվում են որոշակի մասնագիտությունների: Հենց այս ամենի վրա ապացույցը նրանց մասնակցությունն է տարբեր ցուցահանդեսների, որտեղ զբաղեցրել են առաջնային տեղեր՝ հիացնելով դիտորդներին:

Տիկին Սողոմոնյանի հիմնական նպատակն է դպրոցականների համար ստեղծել կուլտուրա գործընթաց: Հենց այս կերպով նա կարողանում է սերմանել խմբում աշխատելու կարողություն, հաղորդակցման հմտություններ և պատասխանատվություն ընդհանուր արդյունքի համար:

Նրա նպատակը նոր անհատականության ձևավորումն է՝ ազատ, ստեղծագործ, ակտիվ: Մեծ ուշադրություն է դարձնում աշակերտների բարոյական, մտավոր, ֆիզիկական և աշխատանքային դաստիարակությանը: Հասարակության մեջ բարոյականության և վարքագծի նորմեր է սերմանում:

Ռուզաննա Սողոմոնյանը երկար տարիներ ղեկավարում է տվյալ առարկայի մեթոդիկական աշխատանքները:

Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի ողջ ուսուցչական կուլտուրայի շնորհավորում է սիրելի գործընկերոջ 60-ամյակը՝ ցանկանալով քաջառողջություն, խաղաղ երկինք:

Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի մանկավարժական հանրույթ

ՈՐՊԵՆ ԱՍՄՈՒՆԷԻ ՄՐՅՈՒՅԹԻ ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

«Լուսարար»-ի համար հայտնություն էր պատանի ասունքող Վլադիկ Գևորգյանը՝ Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի աշակերտը:

Ներքին խաղաղություն պատճառով, ճիշտ շեշտադրությամբ, ամեն բառը հատ-հատ՝ ասես բացատրելով միտքը. այդպիսին էր պատանու արտասանական ոճը, որը գրավեց մեր ուշադրությունը և ասունքի մրցույթն ավարտվելուց հետո ստիպեց փոքրիկ գրույց ունենալ ու բացահայտել 15-ամյա պատանու՝ մեր ժամանակներում ոչ տարածված երազանքը:

Վլադիկը դպրոցի ուսուցիչների՝ վաստակաշատ մանկավարժ Ռիմա Մելքունյանի և իր հայերենի ուսուցիչ Աստղիկ Սողոմոնյանի ու դասընկեր Գոռ Հայրապետովի հետ տուն էր վերադառնում: 8-րդ դասարանը հաջողությամբ ավարտել, փոխադրվել է 9-րդ դասարան: Չարմանք և միևնույն ժամանակ ուրախություն պատճառեց, երբ իմացանք, որ Վլադիկը երազում է դառնալ հայոց լեզվի և գրականության մասնագետ՝ ուսուցիչ կամ դասախոս: Այո, չենք սխալվել. բացատրելու ոճով հանգիստ նրա խոսքը հենց այն գլխավոր հատկանիշն է, որն անհրաժեշտ է մանկավարժին:

- Բայց ուսուցչի աշխատավարձը ցածր է,

մանավանդ՝ տղամարդու համար,- փորձում են նրա հաստատականությունը որոշել ապագա մասնագիտության ընտրության հարցում:



- Կապ չունի, կարևորը սիրած գործ ունենալն է և հոգեկան բավարարություն ստանալը,- եղավ պատանու պատասխանը:

Բնականաբար, հարց ծագեց, թե ինչպես է նրա մեջ սեր առաջացել մանկավարժության նկատմամբ: Նա ասաց, որ դրանում մեծ ազդեցություն ունեն Այգեստանի միջնակարգ

դպրոցում հայոց լեզու և գրականություն ու մաթեմատիկա դասավանդող իր մորաքույրները: Իսկ դասավանդող ուսուցչուհու՝ Աստղիկ Սողոմոնյանի դերն էլ գունարվել է:

Տեղեկացանք, որ ուսուցչուհին 5-րդ դասարանից է Վլադիկին դասավանդում: Նկատել է նրա սերն ընթերցանության, հայերենի նկատմամբ: Հայերենասեր պատանին առաջին տարին չէ, որ մասնակցում է ասունքի մրցույթին: Նա տարվա ընթացքում նաև հաճախել է իր ուսուցչուհու վարած առարկայական խմբակին: Ընթերցանությունը նրա սիրած զբաղմունքն է: Ուսուցչուհին հանձնարարել է ամառային ընթերցանության գրականության ցանկը: Վլադիկը և Գոռը ամենակատիվ ընթերցողներն են: Ուսուցչուհու աշակերտներից 9-րդիցների հետ մասնակցել են այս տարվա առարկայական օլիմպիադային՝ ութերորդի լինելով:

Միայնակ փորձ հաղորդելով՝ գտարյուն մանկավարժներն այսպես արժանավոր փոխարինողներ են պատրաստում՝ ամեն մեկը բարձրացնելով դպրոցի հոգևոր կառույցը: Նման դեպքում հաջողությունները երկար սպասեցնել չեն կարող:

Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍ Է, ՈՐՊԵՍՁԻ ՀԱՍԿԱՆԱՍ՝ ՈՐՏԵՂ ԵՍ ԹԵՐԱՑԵԼ

Հարցազրույց Արթուր ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ հետ



Մարզիկների մոտ հաճախակի են հանդիպում հոգեբանական պատճեններ, որոնք բարեբախտաբար հաղթահարվում են արհեստավարժ մարզիչների և մարզիկների անձնական աշխատանքի շնորհիվ:

Մարզիկների մոտ ի՞նչ հոգեբանական խնդիրների եք մասնավորապես հանդիպում:

Մարզիկների մոտ առաջանում են տարբեր հոգեբանական խնդիրներ՝ կապված այն հանգամանքի հետ, թե արդյոք մարզիկը պրոֆեսիոնալ է պարապում, թե՞ սիրողական: Պրոֆեսիոնալ մարզիկների մոտ հազվադեպ հանդիպում ենք վախ հաղթանակի նկատմամբ, ինչպես նաև՝ վախ պարտության նկատմամբ: Երկու դեպքում էլ դա պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչ արձագանք կլինի շրջապատի կողմից: Մեր մարզիկների մոտ դա շատ զարգացած է: Միևնույն ժամանակ նկատվում է նաև վախ հաղթանակից: Մարզիկներից շատերը մտահոգվում են, թե ինչպես պետք է մարտեն իրենց հաղթանակը, ինչպես պետք է կրեն հաղթողի տիտղոսի պատասխանատվությունը: Յուրաքանչյուր խնդիր ունի իր յուրահատուկ լուծման ձևը, ինչն էլ ժամանակի ընթացքում սովորում են մարզիկները:

Եթե Ձեր գործունեությունը մարտարվեստներին նվիրված չլիներ, ի՞նչ մասնագետ կդառնայիք:

Դժվարանում են պատասխանել, քանի որ, ճիշտն ասած, չեմ պատկերացնում: Երիտասարդ տարիքից ընտրել եմ այս ուղին: Տարբեր մասնագիտություններ կան, որոնցով հետաքրքրված եմ, բայց չկա այնպիսին, որը կարատեի պես լիարժեք հետաքրքրում է ինձ:

Ո՞րն է Ձեր մասնագիտական գլխավոր նպատակը, ի՞նչ եք անելու դրան հասնելուց հետո:

Ամենամեծ նպատակն այս պահի դրությամբ ինչքան հնարավոր է՝ շատ չեմպիոններ պատրաստելն է: Խոսքը վերաբերում է ոչ միայն պրոֆեսիոնալ բնագավառին, այլև ընդհանրապես նաև սիրողական ոլորտում արժանի սերունդ ձևավորելուն ու դաստիարակելուն, որն էլ կնպաստի Արցախի զարգացմանը: Մեր գերագույն նպատակն է զարգացած, մրցունակ, ուժեղ Արցախ ունենալը: Այդ նպատակին ենք ծառայեցնում մեր մասնագիտական կարողությունները:

Սպորտում լինում են ինչպես հաղթանակներ, այնպես էլ պարտություններ: Ի՞նչ է փոխ-

նագիտանալ ավելի ու ավելի: Պետք է հիշել կիոկուշինկայ կարատեի Մեծ վարպետ Մաստիբացու Օյամայի պատգամը. որ կատարելությունը չունի սահման, և շարժվել այդ պատգամով: Անընդհատ ձգտել կատարելությունից, այլ պայքարել ու հաղթահարել: Ամենամեծ դրդապատճառը դա են համարում:

Հաճախ է պատահում, որ կորցնեք հավատն ինքներդ Ձեր հանդեպ: Ի՞նչ եք անում նման դեպքում:

Դա հաճախակի չի լինում, իսկ եղած ժամանակ էլ կարճ է տևում, կարող է տևել մի քանի րոպե: Ինձ մոտ նման պահերը խթան են դառնում, որ կատարվելիք գործողությունս փոխվի, օրինակ, անհաջող ընթացքից վերածվի հաջողության: Այսինքն՝ աշխատում եմ դժվար պահերը հաղթահարել և դրանք դարձնել ավելի լավ ու օգտակար:

Ո՞րն է Ձեր մասնագիտական գլխավոր նպատակը, ի՞նչ եք անելու դրան հասնելուց հետո:

Ամենամեծ նպատակն այս պահի դրությամբ ինչքան հնարավոր է՝ շատ չեմպիոններ պատրաստելն է: Խոսքը վերաբերում է ոչ միայն պրոֆեսիոնալ բնագավառին, այլև ընդհանրապես նաև սիրողական ոլորտում արժանի սերունդ ձևավորելուն ու դաստիարակելուն, որն էլ կնպաստի Արցախի զարգացմանը: Մեր գերագույն նպատակն է զարգացած, մրցունակ, ուժեղ Արցախ ունենալը: Այդ նպատակին ենք ծառայեցնում մեր մասնագիտական կարողությունները:

Սպորտում լինում են ինչպես հաղթանակներ, այնպես էլ պարտություններ: Ի՞նչ է փոխ-

վել Ձեր մեջ առաջին պարտությունից հետո:

Ինձ մոտ հակառակն էր, այսինքն՝ իմ մարզական ուղին սկսվել է պարտությամբ: Բայց պարտություններն են խթան դառնում, որ ապացուցեն, թե դու ինչի ես ընդունակ, ու կարող ես լինել ավելի լավը, ցուցաբերել բարձր արդյունք: Այսօր պարտությունը նույնիսկ դաս է, որպեսզի հասկանաս, թե որտեղ ես թերություն թողել: Անընդհատ հաղթելով դու չգիտես, թե որն է քո թույլ կողմը, և չես կարող դա զարգացնել: Իսկ պարտությունը հնարավորություն է թերությունները շտկելու ու դրանք զարգացնելու, թույլ կողմերն ուժեղացնելու համար:

Մարտարվեստից հանգստանալու ցանկություն լինո՞ւմ է: Ժամանցի ո՞ր ձևն էք սիրում:

Ցանկացած մրցման նախապատրաստվելիս, լինի աշխարհի կամ Եվրոպայի առաջնություն, գալիս է մի պահ, երբ մտածում եմ, թե ինչի եմ մարտ չեմ ուզում մրցաշարին մասնակցել: Մտածում եմ, որ՝ վերջ, սա վերջին մրցաշարն է, հետո կհանգստանամ «տանջանքներից», բայց մրցաշարին մասնակցելուց հետո մորից գալիս եմ այն մտքին, որ ցանկություն ունեմ շարունակելու, հաղթահարելու և առաջ շարժվելու: Ժամանցի սիրելի ձևն են համարում բեռնաթիռի գրկում անցկացնելը:

Ի՞նչն էք համարում ամենադժվարը մարզական հաջողության հասնելու ճանապարհին:

Ամենադժվարն ինքն ինքն հաղթելն է: Այն էլ այն ժամանակ, երբ ներքին ծայրը այլ բան է ասում, իսկ դու ուրիշ բան ես պլանավորել: Ներքին ծայրը կարող է ասել, որ դու էլ չես կարող պայքարել, պետք է նահանջել, բայց պետք է ստիպես քեզ, համոզես, որ՝ ոչ, մենք շարժվում ենք առաջ: Ամեն անգամ պետք է կարողանաս հաղթահարել ծուլությունը, աշխատանքը շարունակել չցանկանալով: Ամենադժվարը սա է: Ինչպես ասում են, դժվարը մրցումը չէ, դժվարը պարապելն է:

Կարո՞ղ եք հոգեբանական արդյունավետ հնարքներ ասել, որոնց միջոցով կարելի է տրամադրվել հաջողության:

Ցանկացած մրցաշարից առաջ, հատկապես եթե ինչ-որ բանից վախեն եմ լինում, մարդ փորձում է ինքն իրեն որեւէ ապրումների տալ, ինչպիսին են, օրինակ, հաղթանակի

կամ պարտության պահերին ունեցած ապրումները: Մարդ իրեն նախապատրաստում է, թե պարտության կամ հաղթանակի պահին ինչ է զգալու: Այդ ապրումները պետք է այնքան զգալ, մինչև որ դրանք դառնան նույնը, այսինքն՝ թե՛ հաղթելու և թե՛ պարտվելու դեպքում ունենալ նույն զգացմունքներն ու ապրումները: Դրանք հավասարեցնելու համապատկերին սկսում են հաճույքով մասնակցել մրցաշարերին և չես վախենում արդյունքից: Մասնակցում ես՝ ոչ թե զագաթնակետ համարելով արդյունքը, այլ որպեսզի մասնակցես գործընթացին: Դրանով անցնելուց հետո կայուն են դառնում հույզերը, ավելի լավ են հասկանում ինքը քեզ:

Որքանո՞վ էր հեշտ Ձեզ համար հրաժարվել մանկական սովորական ուրախություններից հոգուտ խորացված մարզումների: Բողոքո՞ւմ էիք Ձեր ծնողներին:

Մանկական սովորական ուրախություններից հրաժարվելն այնքան էլ դժվար չէր, քանի որ ոգեւորված էի նպատակիս հասնելով: Ծնողներիս ընդհանրապես չէի բողոքում, որովհետեւ նրանք ի սկզբանե դեմ էին իմ պրոֆեսիոնալ մարզումներին: Նրանց համար ավելի կարեւոր էին իմ սիրողական մարզումները, որոնք միտված են առողջությունն ամրացնելուն և ինքնապաշտպանություն սովորելուն: Բայց իմ մարզումների առաջին օրվանից էլ նրանք հասկացել էին, որ ինձ համար հետաքրքիր է պրոֆեսիոնալ ճանապարհը: Որպես մարզիչ՝ աշխատում եմ իմ մարզիկներին չզրկել մանկական ուրախությունից, մանկությունն ապրելու և վայելելու ժամանակից: Դա ամուսն է միայն մրցաշարերին նրանց նախապատրաստելիս: Ինքս էլ երբեմն զգում եմ, որ շատ բաներ իմ մանկության ժամանակ չեմ զգացել, բաց եմ թողել՝ ինձ զրկելով ինձ որոշ մանկական բերկարանքներից:

Ի՞նչ խորհուրդներ կտայիք սկսնակ կատեսիստներին:

Ոչ միայն կարատեստներին, այլև բոլոր սկսնակ մարզիկներին խորհուրդ եմ տալիս որոշել, թե ինչ նպատակ են հետապնդում և ինչ են ուզում ստանալ իրենց մարզումներից: Պետք է կողմնորոշվել. մարզվելու եք պրոֆեսիոնալ, թե՞ սիրողական: Սակայն երկու դեպքում էլ խորհուրդ եմ տալիս շատ լուրջ վերաբերվել մարզումներին:

ԴժՊՈՂՆԵԼՈՒ ՓՈՒՍԱՐԵՆ ՊԵՏՔ Ե ՄԱՐԶՎԵԼ

Նկատել էք, թե ինչքան է մեծացել դժգոհ մարդկանց թիվը: Ամենուրեք դժգոհություն է, դժգոհող մարդիկ, դժգոհ դեմքեր: Բայց համաձայնեք, որ կանայք ավելի շատ են դժգոհում. մերթ իրավիճակից, մերթ իշխանությունից, մերթ երեխաների ծանրաբեռնված դասերից, մերթ խանութներից ու խանութպաններից, մերթ շրջապատից ու աշխարհից, իսկ ավելի շատ այդ բոլորից հետևելով՝ վատ առողջությունից: Բոլորին կարելի է հասկանալ, իհարկե, բայց եկեք միասին գիտակցենք, որ դժգոհությամբ չենք կարող որեւէ լավ բանի հասնել, առավել եւս, անընդհատ դժգոհ լինելն ու դժգոհելու սովորությունը հանգեցնում են առողջական խնդիրների: Առավել հիմա, քան երբեւէ, մենք պետք է լինենք դիմացկուն, ֆիզիկապես առողջ ու հոգեպես կայուն: Կանայք չպետք է մոռանան, որ իրենց ոգու ուժով ու իմաստությամբ կարող են աշխարհ շուռ տալ, քաջալերանքի ու ոգեշնչման աղբյուր լինել տղամարդկանց

համար, խելացի ու հայրենասեր զավակներ դաստիարակել, նոր կյանք տալ ու արարել:

Դժգոհելու կամ վատ առողջությունից անընդհատ խոսելու փո-

մեզ վրա ու խուսափել զանազան դեղերի ընդունումից, որոնց ազդեցությունից նույնպես դժգոհ ենք: Է՞ որ ֆիզիկական վարժությունները կարող են փոխարինել շատ դեղամիջոցների, բայց ոչ մի դեղ չի կարող փոխարինել ֆիզիկական վարժություններին:

Մարզումներ սկսելը ոչ մի տարիքում ու չէ. դա միշտ օգտակար ազդեցություն է ունենում օրգանիզմի վրա: Մինչդեռ ո՞ր մարզածներն ընտրել, և ի՞նչն է երաշխավորվում կանանց կյանքի այս կամ այն փուլում՝ պարզաբանելու կարիք ունի: Կանանց առողջության ոլորտի բացարձակապես բոլոր մասնագետները՝ գինեկոլոգները, ռեպրոդուկտոլոգները, դիետոլոգները, համարում են, որ մարզումները պետք է կարեն որ դեր զբաղեցնեն յուրաքանչյուր կնոջ կյանքում: Պարբերական պարապմունքները լիցքավորում են էներգիայով, բեռնաթափում են նյարդային համակարգը, ամրացնում են իմունիտետը, սիրտանոթային և օրգանիզմի ուրիշ համակարգեր: Բայց պետք է հասկա-

նելու վնասվածքները: Երկրորդ՝ չափից ավել ուժային ծանրաբեռնվածությամբ անդադար մարզումներից հետևանքով տեղի է ունենում մկանային մասսայի աճ՝ փոխարինելով դրանցով օրգանիզմի ճարպային մասը: Առաջին հայացքից դա կարող է գրավիչ երևալ, չէ՞ որ մարմինը դառնում է ձգված ու սլացիկ: Բայց ճարպային մասի անբավարար տոկոսը կնոջ օրգանիզմում կարող է հանգեցնել հորմոնային ֆոնի խանգարման, որից էլ հետևող՝ դաշտանային ցիկլի, մաշկի, նյարդային համակարգի խնդիրների: Կանանց չարժեք գրավել ծանր աթլետիկայով, բողիբիլդինգով, մեծամարտերով:

Իսկ ո՞րն է կանանց համար լավագույն ֆիթնեսը: Էքստրեմալ մարզածությունը պարապելով՝ կանայք ռիսկի են ենթարկում իրենց առողջությունը: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ, օրինակ, պրոֆեսիոնալ կին մարզիկների ծննդաբերելու հնարավորությունը 3-5 անգամ ցածր է, քան սովորական կանանց մոտ: Այդ պատճառով համուն սեփական կանացի բարեկեցության, այնուամենայնիվ, ավելի լավ է ընտրել չափավոր ծանրաբեռնվածությամբ մարզումներ: Կա-



խարեն պետք է մի կողմ դնել պատճառաբանությունները և սկսել մարզվել: Դեպի հիվանդանոց տանող ճանապարհը լավ գիտենք, բայց արդյո՞ք գիտենք, թե որ ճանապարհներն են դեպի մարզադահլիճներ տանում, և որտեղ կարելի է մարզվել: Ինչո՞ւ նախընտրում ենք այնքան սպասել, որ ստիպված լինենք հասնել հիվանդանոցի դուռը, բայց չենք նախընտրում աշխատել



ՕԳՏԱԿԱՐ ԵՎ ՕՐԻՆԱԿԵԼԻ

ԿՐԱՎ - ՄԱԳԱ

Անվան ծագումը. Անվանումը երբայերեն նշանակում է՝ «կոնտակտային մարտ» («մագա»՝ կոնտակտ, «կրավ»՝ մարտ) եւ պատկանում է այն մարտերի շարքին, որտեղ հակառակորդի հետ կա անմիջական ֆիզիկական փոխազդեցություն: Ինչպես նաեւ կրավ-մագան ներառում է ժամանակակից զենքի տեսակների՝ հրացանների, ատրճանակների եւ ուրիշ առարկաների կիրառում՝ համարված ինքնապաշտպանության հնարքների հետ: 1930-ական թվականներին Իմի Լիխտենֆելդը մշակել է ձեռնամարտի այս համակարգը, որպեսզի օգնի Բրատիսլավայի հրեական համայնքին՝ պաշտպանվել նացիստներից:

Հիմնական սկզբունքները. Կրավ-մագայում գոյություն չունեն հստակ կանոններ, եւ մարզումների մեջ տարբերություն չկա տղամարդկանց ու կանանց համար: Կրավ-մագան սպորտ չէ. բացակայում են համազգեստն ու մրցութեղերը, չնայած որոշ կազմակերպություններ, հաշվի առնելով ուսումնառության աստիճանը, պարապողներին շնորհում են դասային տարբեր նշաններ: Բոլոր հնարքները կենտրոնանում են առավելագույն արդյունքի վրա իրական պայքարի պայմաններում: Ելնելով այն դրվածքից, որ իրական հակառակորդի հարձակվելու դեպքում չի լինելու կարեկցանք եւ զիջում, պատասխան արձագանքը (ինչպես հարձակվելը, այնպես էլ պաշտպանվելը) ուղղված է վտանգը չեզոքացնելուն ու փրկվելուն այնքան արագ ու անվտանգ, որքան դա հնարավոր է: Հաշվառված է դրա կիրառումը կյանքին պոտենցիալ վտանգ սպառնալու դեպքերում: Շեշտը դրված է թույլ կետերը վնասելու (ընդ որում՝ աչքերի ծակում, աճուկին հարված), գլխով հարվածների եւ այլ հնարքների վրա, ինչպես նաեւ՝ ինպրովիզացիայով օգտագործելու ցանկացած հասանելի առարկա: Միեւնույն ժամանակ սովորեցնելու ընթացքում ցույց է տրվում, թե ինչպես մեղմացնել հնարքները իրադրությանը համապատասխան, եւ ընդգծվում է պահանջվող ինքնապաշտպանության սահմանի պահպանման անհրաժեշտությունը:

Չստանալ վնասվածք, հատկապես՝ թույլ չտալ, որ հայտնվեն գետնին, այնպես «ծեծը ավարտին կհասցնեն»: Արագ վնասագործել հարձակվողին: Արագ անցում կատարել պաշտպանողական տեխնիկայից դեպի հարձակողական: Օգտագործել մարմնի ռեֆլեքսները: Օգտագործել հակառակորդի խոցելի կետերը: Օգտագործել ձեռքի տակ եղած ցանկացած առարկա՝ պաշտպանվելու եւ հարձակվելու համար. սրանք կրավ-մագայի հիմնական դրույթներն են:

Ի տարբերություն մի շարք արեւելյան մարտարվեստների, կրավ-մագան չի հիմնվում

որեւէ փիլիսոփայական համակարգի վրա: Նրա նպատակը ֆիզիկական գոյությունն ապահովելն է, ոչ թե հոգեւոր ինքնակատարելագործումը: Դրա համար էլ կրավ-մագայի հիմքում մարդու ռեֆլեքսների գիտական հետազոտություններն են՝ ինչպես հարձակվողի, այնպես էլ պաշտպանվողի:



**Մարզում.** Չնայած նրան, որ կրավ-մագան իր տեսականում մեջ ներառում է ուրիշ մարտարվեստների տեխնիկաներ, այնուամենայնիվ, պատրաստման մեթոդիկան եւ մարզումները այլ կերպ են անցկացնում: Շեշտը դրվում է մարտիկ պատրաստելու իրավիճակային մեթոդի վրա՝ իրականությանը առավելագույնս մոտ իրավիճակներ ստեղծելով: Որպես օրինակ անց են կացնում մարտեր մի քանի հարձակվողների մասնակցությամբ, սովորում են ինչպես պաշտպանվել երրորդ անձին, մարտը վարում են՝ օգտագործելով միայն մեկ ձեռքը,



սովորում են՝ ինչպես շարունակել մարտը գլխապտույտի դեպքում եւ ինչպես վարվել զինված հարձակման դեպքում: Ընդգծված է արագ սովորելու կարեւորությունը, սովորածի արդ-

յունավետությունը տարբեր պայմաններում: Մարզումների ժամանակ հետեւում են երկու կարեւոր սկզբունքի՝ իրական մարտում չկան կանոններ եւ մարզման ժամանակ չի կարելի վնասել ոչ թեզ, ոչ էլ խմբակիցներիդ: Մարզումները ներառում են աէրոբ եւ անաէրոբ ծանրաբեռնվածությամբ վարժություններ, որոնք կատարվում են պաշտպանիչ հանդերձանք կրելով: Օգտագործվում են գլխի, աճուկի, սրունքների, նախաբազուկների պաշտպանիչներ, ռետինե վահաններ եւ այլն, որոնց շնորհիվ հնարավոր է հասնել իրական ազդեցության մակարդակի՝ առանց վնասելու: Աշակերտները հնարավորություն են ստանում պաշտպանողական եւ հարձակողական տեխնիկաները կատարել լրիվ ուժով եւ իրենց վրա զգալ հարվածի ուժը: Կրավ-մագայի որոշ դպրոցներում կատարում են լրիվ կոնտակտով սպարինգներ, որպեսզի սովորողներն իրա-



պես ծանոթանան մարտերի ժամանակ առաջացող սթրեսի հետ:

Պարապմունքները կարող են անցնել բարձր, ճնշող երաժշտության ներքո, ստորոբուկայի (լուսային էֆեկտով աչքի համար խաբկանք ստեղծող սարք) կիրառմամբ: Կարող են օգտագործվել արհեստական ծուխ առաջացնող սարքեր եւ նման բաներ, ինչը թույլ է տալիս սովորել շեղող պայմանները, արհամարհել եւ կենտրոնանալ իրավիճակի վերլուծության վրա: Իրական վիճակը ներկայացնելու համար պաշտպանողական հնարքները կարող են կատարել տալ հոգնեցնող ֆիզիկական վարժություններից հետո, մարզումները կարող են կազմակերպել տարբեր ռեֆլեքս ունեցող տարածքներում, ոչ հարմար պայմաններում, փակ աչքերով: Շեշտադրված է իրական մարտի ընթացիկակումը այնքանով, որքանով դա հնարավոր է մարզումների պայմաններում:

Կրավ-մագայի քաղաքացիական դպրոցներ-

ում մեկ դասը տեւում է մեկ ժամ, որը համադրում է ֆիզիկական պատրաստությունը ինքնապաշտպանության հնարքներ սովորելու հետ: Սկզբում կատարվում են ինտենսիվ ֆիզիկական վարժություններ, ձգումներ, հետո ցուցադրվում են որոշ ինքնապաշտպանական հնարքներ՝ հարձակողական (բռնուցքով, արմունկով ու ծնկով հարվածներ) կամ պաշտպանողական (խեղդող բռնումներից դուրս գալ, պառկած վիճակում ինչպես դուրս գալ հակառակորդի տակից): Դրանից հետո սովորաբար անց են կացնում ակրոբատիկ հնարքներ պարունակող ֆիզիկական վարժություններ: Գիտելիքների աստիճանը աճելուն համապատասխան մարզիչներն անցնում են ավելի դժվար հարձակումներից ազատվելու կամ դանակով ու զենքով հարձակումներից պաշտպանվելու տեխնիկաներ սովորեցնելու:

**Հումոր.** Այս համակարգի մարտական ուղղվածությամբ պայմանավորված կատակ գոյություն ունի. եթե կրավ-մագայից անցկացվելին համաշխարհային մրցաշարեր, ապա հաղթողը որպես մրցանակ կստանար վերակենդանացման բաժանմունքում պառկելու համար պահանջվող գումարը, երկրորդ տեղ գրավողին կտրվեր առեւտրային կառույցի սայլակ, իսկ երրորդ տեղ զբաղեցնողը կստանար իր հուղարկավորությունն անվճար կազմակերպելու հնարավորություն: Այս կատակը մոտ է ժշմարտությանը. կրավ-մագայում ընդհանրապես արգելված հնարքներ չկան:

Կրավ-մագան Իսրայելի ՊԲ-ի ինքնապաշտպանական եւ մարտական պատրաստման պաշտոնական համակարգն է: Յուրաքանչյուր զինվոր, ընդ որում՝ հատուկ նշանակության առանձին ստորաբաժանումներում, ոստիկանության ծառայակիցներն ու պաշտպանական գործակալության աշխատակիցները սովորում են կրավ-մագա: Դրանից բացի Իսրայելում եւ մի քանի ուրիշ երկրներում կրավ-մագան դասավանդվում է քաղաքացիներին, իրավապաշտպան օրգաններին: Ռուսաստանի Դաշնությունում կրավ-մագայի կենտրոններ կան Պետերբուրգում, Մոսկվայում, Եկատերինբուրգում, Նովոսիբիրսկում եւ ուրիշ քաղաքներում: Հայաստանում նույնպես գործում է կրավ-մագայի կենտրոն, ուր հաճախում են քաղաքացիներ՝ անկախ սեռից ու տարիքից, կան խմբեր նաեւ երեխաների համար: Հնարավոր է, որ ճիշտ ու համապատասխան համակարգ կիրառելու հաշվին է Իսրայելը վայելում իր անվտանգությունը պաշտպանող լավագույն երկրի համբավը:

Ստածենք. գուցե նաեւ ընդօրինակելու բաներ՝ կունենանք:

նանց առողջության համար բարեհաճ են մարզումների հետեւյալ տեսակները.

- Աերոբային ցածր եւ միջին ինտենսիվությամբ ու տեւողությամբ մարզումներ. Օրինակ՝ առավոտյան թեթեւ վազք, հեծանվամարզասարքով պարապմունքներ, աէրոբիկա, արագ քայլ:

- Մարմնի ծովածությանն ուղղված վարժությունների կոմպլեքսներ՝ յոգա, պիլատես, լող, ինչպես նաեւ շնչառական կոմպլեքսներ՝ թայ չի, ցիգուն:

- Ուժային թեթեւ եւ միջին ծանրաբեռնվածությամբ վարժությունների կոմպլեքսներ. կարելի է, օրինակ, 60 րոպե տեւողությամբ պարապմունքից 20-ը հատկացնել ուժային վարժությունների, որոնք օգնում են ամրացնել մկանները:

- Ուժքով զբոսանքներ, հեծանիվ քշել, պարել, առավոտյան մարմնամարզություն. այս ամենն օգտակար է կանանց օրգանիզմին, հատկապես եթե դրանք կատարվում են ուրախությամբ ու հաճույքով:

Հաճախ տրվող հարցերից է, թե կարելի՞ է, արդյոք, մարզվել դաշտանի կամ հղիության ժամանակ: Բժիշկների կարծիքով՝ եթե դաշտա-

նային ցիկլն անցնում է առանց բարդությունների (ուժեղ ցավային ախտանիշ, գլխապտույտ, որովայնի շրջանում ծանրություն, նորմալից ավել արտադրություն ունենալու դեպքում պետք է խորհրդակցել բժշկի հետ), ապա ֆիթնես-մարզումները ոչ միայն չեն արգելվում, այլեւ երաշխավորվում են: Երբ կինը զբաղվում է սպորտով դաշտանի ժամանակ, արյան շրջանառությունը բարելավվում է, ինչն էլ նպաստում է դաշտանի ժամանակ օրգանիզմում կատարվող բոլոր բնական գործընթացների հաջող ընթացքին: Բայց մարզումների սովորական գրաֆիկն անհրաժեշտ է լինում որոշակի փոփոխության ենթարկել՝ շնչառական վարժությունները: Հղիության ընթացքում նույնպես արգելված չեն մարզումները, եթե կա հետեւող բժշկի կողմից թույլտվություն: Կան ֆիթնեսի առանձին խմբեր, որոնք նախատեսված են

առաջին, երկրորդ եւ երրորդ եռամսյակում գտնվող հղիների համար:

Ի՞նչ ազդեցություն ունեն սպորտն ու մարզումները կանանց բարոյական առողջության վրա: Հետազոտությունները ցույց են տվել, որ մարզումներն ազդում են հոգե-



վիճակի վրա, որի գիտական ապացույցները բազմաթիվ են: Ֆիզիկական ծանրաբեռնվածությունը թույլ է տալիս բարձրացնել էներգիայի մակարդակը, դառնալ ավելի դիմացկուն եւ առողջ: Ինչպես նաեւ պարապմունքներն օգնում են նրանց, ովքեր ունեն թույլ կամ քի ուժ՝ զարգացնելու այդ հատկություն-

ներ: Ֆիզիկական վարժությունները բարձրացնում են էնդորֆինի՝ երջանկության հորմոնի, մակարդակը արյան մեջ եւ թուլացնում են դեպրեսիայի ախտանշանները: Ընդ որում, բավական են շաբաթվա մեջ ընդամենը երեք անգամ թեկուզ կես ժամանոց պարապմունքները:



Սպորտով պարապելիս կնոջ մոտ ձեւավորվում են կյանքի համար օգտակար հատկություններ, ինչպիսիք են նպատակասլացությունը եւ ինքնավստահությունը: Սպորտը ստիպում է աշխատանք կատարել ինքը թեզ հետ եւ չի թողնում տրվել սթրեսներից: Սիրած զբաղմունքից մարզումները հա-

ճախ վերածվում են ինքներս մեր առջեւ հստակ նպատակներ դնելու եւ կատարելու հետաքրքիր գործընթացի: Օրինակ՝ նպատակ դնել մարմնի հստակ քաշ ունենալ եւ հասնել նպատակին: Դա օգնում է, որ սովորական կյանքում մենք դնենք հստակ նպատակներ եւ հաջողությամբ կատարենք դրանք՝ վստահ լինելով մեր ուժերին: Սպորտը հիմնականում դրական է ազդում բարոյական առողջության եւ հոգեկան վիճակի վրա: Բարելավվում են քունն ու հիշողությունը, տազանապայմությունը նվազում է, նյարդային համակարգը սկսում է արդյունավետ աշխատել: Մարզումները հանում են հոգնածությունը, իրքան էլ պարտադրաբար է հնչում, ովք թեկուզ ոչ մեծ մարզական նպատակների կատարումը տալիս է բավարարվածության եւ վստահության զգացում:

Ուրեմն, մի կողմ դնենք դժգոհությունը, մարզվենք, լինենք առողջ, զգոն, կարողանանք մեր ներուժն օգտագործել ու միապին դիմակայել դժվարություններին:

ՄՇԱԿՈՒՅՑ

ՏԱՐԵՎԵՐԶՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՄԵՐԳ

Հունիս ամիսն առատ էր հաշվետու համերգներով ինչպես մայրաքաղաք Ստեփանակերտում, այնպես էլ շրջաններում: Մշակութային կրթություն իրականացնող հաստատությունները, հանրությանը ներկայացնելով տարվա ընթացքում կատարած աշխատանքները, այդպես էլ եզրափակում են ուսումնական տարին:

Ստեփանակերտի Հակոբ Գյուրջյանի անվան արվեստի դպրոցն արդեն 42 տարի է՝ շարունակում է այս գեղեցիկ ավանդույթը: Այս տարվա նրա հունձըր դարձյալ առատ է: Դպրոցն ունի իր ուրույն տեղը մայրաքաղաքի մշակութային կյանքում: Նրա սաները ելույթներով հանդես են գալիս Ստեփանակերտում կազմակերպվող բոլոր միջոցառումներին: Ներդրողական միջոցառումներն էլ քիչ չեն: Հունիսին լրացել է Արամ խաչատրյանի ծննդյան 120-ամյակը, որը նշանավորել են նաև արվեստի դպրոցում՝ ներկայացնելով նրա ստեղծագործությունները:

Այս դպրոցը հաճախում է ավելի քան 400 երեխա: Բացվում են նոր բաժիններ, որոնց մի մասը ներկայացված էր հաշվետու համերգին: Դպրոցն այս տարի ունի 35 շրջանավարտ, միջազգային մրցույթ-փառատոների չորս դափնեկիր: Մշակույթի պալատի ցուցասրահում ցուցադրված էին քանդակագործության, դեկորատիվ, կիրառական արվեստի և կերպարվեստի բաժինների սաների աշխատանքները:

Իսկ դափնեկիր հանդիսատեսը վայելեց համերգային հարուստ համարները՝ հայ և արտասահմանյան մեծանուն կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ ժանրային և գործիքային տեսակներով: Համերգն սկսվեց թատերաբանի բաժնի սանի խորհրդանշական արտասանությամբ. «Ձիմվոր լինենք Մաշտոցի պես, Փառքով պահենք ու գուրգուրենք Ազգը փրկող տառերը մեր, հոսենք մաքուր, սահուն, հստակ, Հնչի լեզուն որպես օրհներգ...»: Ապա հետևում են երգչախմբի՝ «Խնկի ծառ» և «Հայաստան» երգերի կատարումները:

Հերթով բեմ են հրավիրվում պարի, երգեցողության, քանոնի, ջութակի, դաշնամուրի, կիթառի, դիլի բաժինների սաները: Դասական երգերի արհեստավարժ կատարումները խոսում են արվեստի դպրոցի լուրջ ուղղվածության մասին:

Դասական, ազգային, ժամանակակից պարերը՝ սաների գունագեղ հագուստներով, մի առանձին տրամադրություն են ստեղծում դահլիճում: Շրջափակման պայմաններում մեր երեխաները, զրկված լիարժեք սննդից, հանգստի պայմաններից, հոգեկան անդորրից, շնորհիվ ծնողների և ուսուցիչների անդուլ ջանքերի, կարողանում են հաղթահարել դժվարությունները և հասնել հաջողությունների: Այդ երեխաների մի մասը միջազգային մրցույթների դափնեկիր է: Չլինել շրջափակումը, ավելին կլինեին հաղթանակի դափնեները, սակայն վստահ են, որ ամեն ինչ դեռ առջևում է:

Հ. Գյուրջյանի անվան արվեստի դպրոցը բացահայտել գիտի տաղանդավոր երեխաներին: Դրանում մեծ ներդրում ունի դպրոցի մանկավարժական կոլեկտիվը տնօրեն՝ ԱՀ մշակույթի վաստակավոր գործիչ Էվելինա Լալայանի գլխավորությամբ, որի անդամները մեծ նվիրումով ու սիրով գիտելիքներ ու հմտություններ են փոխանցում սաներին:

Մեծ բեմ տանող ճանապարհը սկսվում է փոքր բեմերից

Հ. Գյուրջյանի անվան արվեստի դպրոցը շնորհաշատ սաներին նախապատրաստում է դրան՝ սովորական թվացող ստուգաթղթերը,

սաների գիտելիքները ստուգելուց զատ, դարձնելով բեմին նրանց հարմարվելու յուրատեսակ վարժանք:

Դպրոցում ձևավորված գեղեցիկ ավանդույթներից է բաց ստուգաթղթերի անցկացումը, որի ժամանակ ծնողներն ակնատես են լինում իրենց երեխաների գիտելիքների



ստուգմանը: Դա ստուգաթղթ-դաս-համերգ է: Խորեոգրաֆիկ բաժնի բաց ստուգաթղթի ներկա էր նաև «Լուսարար»-ը:

Միջոցառումը վարող՝ դպրոցի ուսումնական մասի վարիչ Հասմիկ Միխայլովա-Գրիգորյանը բացատրում է բաց ստուգաթղթի նպատակը՝ հնարավորություն տալ տարբեր մակարդակի պատրաստվածություն ունեցող երեխաներին հրապարակային ելույթների: Ամեն երեխա, որը հաճախում է արվեստի դպրոց, հնարավորություն կունենա ստանալ բեմական փառքի իր փոքրիկ մասը:

Խորեոգրաֆիկ բաժնում սովոր-

ԵՐԲ ԱՌԿԱ ԵՆ ՌԻՍՈՒՑԻՉ-ԱՇԽԱԿԵՐՏ ՍԵՐՏ ԿԱՊԸ

Արվեստի դպրոցի լավ ավանդույթներից է առանձին դասատուի աշակերտների բաց ստուգաթղթ՝ յուրաքանչյուրի մասին տեղեկությունների հաղորդմամբ: Ուսմանավար Հասմիկ-Միխայլովա-Գրիգորյանը կարողանում է յուրաքանչյուրի դիմանկարը ներկայացնել պատկերավոր և հավուր պատշաճի:

Երաժշտության դասատու լինելու համար անհրաժեշտ է բացառիկ նվիրվածություն: Միայն այդ դեպքում աշխատանքը կերի հաճույք և օգուտ: Այս մասնագիտության առանձնահատկությունն այն է, որ յուրաքանչյուր երեխայի պետք է ցուցաբերել անհատական մոտեցում: Մեկի հետ պարապելիս պետք է երկար ժամանակ կանգ առնել բարդ տեղերը կրկնելով, ձեռքից բռնած սովորեցնելով, մյուսին, հակառակը, տալ ուժեղ ծրագիր, քանի որ նա արագ է յուրաց-



չու, 2-րդ կիսամյակից հետո չուզեց հաճախել դաշնամուրի դասերին, քանի որ գերված է նաև պարով և նկարչությամբ: Դասատուն կարծում է, որ աղջիկն, այնուամենայնիվ, կուզենա նորից հաճախել դաշնամուրի: Համեմայն դեպք, նրա նվազը հուսադրող էր:

Դասարանի ամենակրտսեր մասնակիցը 1-ին դասարանից Լիա Բալասանյանն է՝ երկու տաղանդավոր դաշնակահար եղբայրների քույրը: Նա մեկ տարի է, ինչ հաճախում է դաշնամուրի բաժնի: Նվազեց 3-րդ դասարանի համար նախատեսված ստեղծագործություններ: Նշանակում է՝ ապագա ունի, խոստացել է եղբայրներից առաջ անցնել:

Վաղիմ Բալասանյանը՝ միջազգային մի շարք մրցույթների դափնեկիր, իր ռեպերտուարում է բառի ամենափակակա իմաստով. ինչքան արագ կատարվող ստեղծագործություն՝ այնքան լավ նրա համար: Այս տարի նա ավարտում է դպրոցը և շարունակելու է ուսումը Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջում: Համերգին ներկա էր քոլեջի տնօրենը, որը ցույց տվեց, որ գրավաբաց է ընդունելու նրան: Ափսոս է բաժանվել նման աշակերտից, բայց ինչ արած, է. Լալայանը հաջողություններ է մաղթում նրան:

Կարեն Բալասանյանը նույնպես միջազգային մրցույթների դափնեկիր է՝ դաշնամուրի 5-րդ դասարանի սան: Նվազեց երկու դասարան բարձր ստեղծագործություններ: «Շատ երաժշտական տղա է, լավ «ականջներ» ունի, ինչ տալիս է, նվազում է: Խոստումնալից ապագա ունի», - ասում է Լալայանը:

Ահա նաև այս մեթոդիկայով է դասատուն սովորեցնում ու ներկայացնում սաներին՝ երջանիկ լինելով սաների հաջողություններով և երջանակեցնելով ծնողներին: Եվ պատահական չէ, որ տաղանդավոր ընտանիքի մայրը չէր կարող չզննահատել ուսուցչի աշխատանքը:

ՇՆՈՐՀԱՎԱԿՈՒԹՅՈՒՆ ԶԵՁ, ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐ

Մերի ԲԱԼԱՍԱՆՅԱՆ, ծնող.

- Ականատես լինելով դժվարին այս պայմաններում ձեր գործունեությանը՝ ակամայից ուզում եմ բացակայել՝ դուք հերոսներ եք: Այո, ուսուցիչները այսօր թերևս մեր հասարակության ամենատոկուն խավն են: Չափազանցած չեմ լինի, եթե ասեմ, որ մեր հայրենիքի առաջին բժիշկները դուք եք, սիրելի ուսուցիչներ, որ ձեր տված գիտելիքներով, գաղափարներով, սպեղանի եք դնում Արցախի մանուկների վիրավոր սրտին: Հարգելի տիկին Լալայան, հատուկ շնորհակալություն եմ ուզում հայտնել ձեզ, որ իմ բալիկների համար բացի լավագույն ուսուցչուհի լինելուց

Դուք նաև 2-րդ մայր եք: Նույնքան հոգատար, բարի, համբերատար, միևնույն ժամանակ՝ խստապահանջ: Ձեր շնորհիվ այսօր նրանք կարող են խոսել երաժշտության լեզվով: Ցանկանում եմ ձեզ մեծ համբերություն, եռանդ, առողջություն, որպեսզի այսուհետև ևս Արցախի համար կրթեք ու դաստիարակեք լավագույն սերունդ, քանզի մեր հայրենիքն այսօր ունի լավ մասնագետների կարիք: Ի դեմս Ձեզ շնորհակալություն եմ հայտնում Հ. Գյուրջյանի անվան արվեստի դպրոցի բոլոր ուսուցիչներին, յուրաքանչյուրին՝ անհատապես: Երախտապարտ եմ ամեն ինչի համար: Դուք ձեր մեջ ուժ գտաք հաղթահարել պատերազմ, համավարակ, հետպատերազմյան անասելի դժվարություններ: Համոզված եմ, որ այսուհետև ևս կկարողանաք կատարել ձեր աշխատանքը լավագույն ձևով: Համոզված եմ, որ ձեր սաները սիրում են ձեզ, նրանք ամենաբարձր բեմերից բարձր կպահեն Արցախի անունը: Թող խաղաղություն լինի Արցախում, և մենք բոլորս մեր բալիկների հետ ստեղծենք, ապրենք, արարենք, ազատ ու անվտանգ Արցախում:

Սվերլանա ԽԱԶՍՐՅԱՆ



ում է 146 երեխա: Նրանց հետ աշխատում է 4 դասատու տարբեր պարային ոճերում՝ դասական, ժողովրդական, ժամանակակից, սպորտային: Նրանք՝ Անահիտ Ախրոնյանը, Նաիրի Ազատյանը, Էլլա Թովմասյանը, Անի Աբրահամյանը երեխաների առջև բացում են արվեստի սահմանները, սովորեցնում ապրել երազանքով, կանգ չառնել ձեռք բերածի վրա:

Խորեոգրաֆիկ բաժնի մենափոքր սաները, բախվելով առաջին դժվարություններին, չընկրկեցին: Հակառակը՝ վստահորեն հաղթահարել են և մտել պարի աշխարհ:

Նա, ով որոշել է դառնալ պարի ուսուցիչ, պետք է սանին նվիրի իր փորձը, գիտելիքները, ուժը, էներգիան, որը երեխաներին կօգնի ամեն դասի հաղթահարել մի բարձունք: Հենց սա՝ է արվեստի հմայքը: Դասատուն պետք է բացի և ցույց տա իր սանին այդ հրաշք աշխարհը, որտեղ նուտաներն ու շարժումները ստեղծում են անկրկնելի և զարմանալի հարմոնիա:

Երեկոյի ընթացքում վոկալ բաժնի սաները երաժշտական համարներով աջակցում էին պարի իրենց ընկերներին:

ում և պատրաստ է մասնակցել մրցույթների: Դասատուի խնդիրն է ճիշտ որոշել, թե երաժշտական կրթությունը այդ երեխային պետք է ընդհանուր զարգացման համար, թե՞ լրջորեն պլանավորել՝ նրա կյանքը կապելու երաժշտության հետ: Մասնագիտական որակների հետ դասատուն պետք է ունենա այլ կարևոր հատկանիշներ՝ բարի կամեցողություն, համառություն, հաղորդակցվելու, երեխայի տրամադրությունը հասկանալու կարողություն: Լինել ոչ միայն վարպետ, այլև ընկեր դժվարին կացության մեջ, ցուցաբերել բարոյական աջակցություն: Այս հատկանիշներն ունի դաշնամուրի մշյալ դա-



սարանի դասատու՝ ԱՀ մշակույթի վաստակավոր գործիչ Էվելինա Լալայանը:

Նրա սաներից Հարութ Պողոսյանը այս տարվա հունվարից է եկել նրա դասարան: Սովորել է Շուշիում՝ Գ. Դազարյանի անվան դպրոցում, եղել է Է. Լալայանի աշակերտուհու սանը: Պատերազմից հետո երկու տարի չի հաճախել դասերին, ծնողները հետո որոշել են, որ պետք է շարունակի: Է. Լալայանը համոզված է, որ Հարութը դեռ կբացվի:

Դասատուն անկեղծանում է. նրա մյուս աշակերտ Լիա Բախտուղարյանը, չգիտես ին-

ԼՈՒՍԱՌԱՔ ՆԵՏԱԳԻԾ

ՀԱՅՐԵՆԱԿԵՐ ՀԱՅՈՒԿՈՒ ՊԱՏՎԱԲԵՐ ՎԱՍՏԱԿ



Մարդու կյանքը նման է հեռաստանների, որոնց հասնելու համար պետք է նվիրում ունենալ, այն լցնել հոգեկան հարստությամբ, պահն այնպես օգտագործել, որ այն հասցնի դարին ու հավերժությանը:

Առիթ է մեր սրտի խոսքը գրելու և երախտագիտությունը հայտնելու ուսուցչի վեհ կոչմանն արժանի մարդուն, վաստակաշատ մանկավարժին՝ Ստեփանակերտի Ա.Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանին:

Լ. Մարտիրոսյանը իր գիտակցական կյանքի ամեն ակնթարթ շղթայել է կրթությանը, դպրոցին, աշակերտությանը և մոմի նման լուսավորել սերունդների ուղին ու հասցրել կատարելության: Նրա կյանքի բոլոր տարիների մեջ լույս, հավատ և մաքառում կա: Եվ երբ հետադարձ հայացք ես ձգում նրա անցած խորաթափանց, խորիմաստ կյանքի ճանապարհին, տեսնում ես, որ իզուր չեն անցել ձգտումներն ու սպասումները, տվյալներն ու երազանքները, որ նա իր կայուն տեղն ունի այս կյանքում և կարող է հպարտությամբ արտաբերել. «Ես էլ իմ ներդրումն ունեմ Արցախ աշխարհի, մեր պետականության կերտման ու բարգավաճման գործում»: Իրավամբ, Լ. Մարտիրոսյանի ներդրումը մեծ է և՛ Ղարաբաղյան շարժման, և՛ մատաղ սերունդի կրթության ու դաստիարակության ամենակարևոր գործում: Նա մեծատառով հայրենասեր է: Նրա համար հայրենասիրությունը ոչ միայն գաղափար է, այլ նաև մեծագույն արժանապատվություն: Պատահական չէ, որ հայ Մոր սրտով ուսուցչուհին իր երկու զավակներին տվել է Արարատ և Մասիս անունները: Ակնհայտ է դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության դրվածքը, որը լավագույն արդյունքների է հասել կրթօջախում: Ակներև են նրա ձեռնարկումները՝ կրթական բարեփոխումներին համահունչ: Ակնառու են բազմափորձ տնօրենի յուրահատուկ մոտեցումները բոլոր հարցերում: Մարդկանց հետ աշխատելու նրա ձևերն ու հմտությունները, գեղեցիկ ու տեղին խոսքը, մարդկային հմայքը նպաստում են դպրոցում մանկավարժական և աշակերտական հանրությանը համերաշխ և փոխըմբռնունով գործունեությանը:

Հիրավի, դպրոցը Լ. Մարտիրոսյանի ասպարեզն է, որին նա նվիրաբերել է իր կյանքի ավելի քան քառասուն լավագույն տարիները, որից քսանմեկը՝ որպես տնօրեն:

Սիրելի՛ ընկեր Մարտիրոսյան, Ձեր տարիների վաստակը թող դառնա այն համեստ լուսան, որ Դուք գցում եք մեր Հայրենիքի պատմության գանձանակի մեջ, իսկ Ձեր վաստակի առաքելությունը դեռ առջևում է...

Դուք՝ որպես ԱՐ արժանավոր քաղաքացի, կարող եք բաց ճակատով քայլել իր պարտքը կատարած մարդու իրավունքով:

Վաստակաշատ մանկավարժ, հարգարժան տնօրեն, մեր սիրելի՛ ընկեր Մարտիրոսյան, հ. 2 հիմնական դպրոցի ողջ հանրությունը մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, արևաշատություն, Բարձրալի օրհնություն, խաղաղ և անամպ արցախյան երկնակամար:

Թող մշտապես շողա Ձեր մեջ ապրող Արևը...

Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցի մանկավարժական հանրույթ

Լաուրա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՈՒ ԿՎԱ ՆՈՐԻՑ ՍԵՊՏԵՄԲԵՐ...

ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ ԱՌԱՋ...

Ժպիտս, տխրությունս ժպտացող լցրի մի ծաղկաման, և ծաղիկ բացվեց...

Տխրությունս ժպտացող ես լցրի անջուր, նկարվող մի ծաղկաման,

Գեղեցիկ մի ծաղիկ տեսքով նկարեցի ծաղիկ մի քնքուշ, Ինքս՝ ինձ և նկարվող ծաղիկն ժպտալով,

Ինքս ինձ ժպտալով և լռիմ, միայնակ նախշեցի մի ծաղիկ՝ ժամին նայելով,

Ասես հոգիս էր նախշերի հետ մտնում ջրաման ու դառնում ծաղիկ...

Մենակ եմ, և լուռ է, ո՛չ մի ծայն, Իմ հոգին՝ և տխուր, մտալույծ, բայց ուրախ մի ծաղիկ էր ուզում նկարել,

Ժպտացող մի ծաղիկ՝ գործնական թերթիկի անկյունում: Ո՛վ գիտե՛ ինչքան տխուր էին նկարիչներն այն հանձարելու ու հայտնի,

Որոնց հոգին երկի լացելով, Բայց ուրախ գույներ են տվել կտավին,

Որ իրենցից հետո մարդիկ չտխրեն, երբեք չտխրեն, Որ մարդը տեսնի գույներն իր ձեռքի,

Որ լացող հոգուց ժպիտով ծնված, ուրախ ծփանքով, Ու աչքով անող ծաղիկը տեսնի,

Եվ որ չհիմանան, երբեք չհիմանան, թե թախծոտ, տխուր Սրտից է ծնվել ժպտացող ծաղիկն այդ՝ ծիծաղով լցված:

Իրենցից հետո, իրենցից հետո... Թող մարդիկ տեսնեն գույների խաղն ու այդ նուրբ ծաղիկը ծաղկամանի մեջ

Ու թող մտածեն, այդպես իմանան, այդպես մտածեն. Ինչքա՛ն երջանիկ, ինչքա՛ն ուրախ մարդ-նկարիչ էր նա...

Տխրությունն իմ ու ժպիտս տխրաշունչ Պարուկեցին նկարվող անջուր ջրամանին,

Եվ ջրից ծնվեց գեղեցիկ մի ծաղիկ Ընդամենը կապույտ մածուկով զոված ու ներկված...

Ձայներ են, նրանք են, որ կգան... ժամը 16:00-ն է ...

20.06.2023թ.

ՈՒ ԿՎԱ ՆՈՐԻՑ ՍԵՊՏԵՄԲԵՐ...

Ու կգա նորից սեպտեմբեր, Կբացվեն դռները տաճարի, Գույների խաղով կլցվեն նորից Տանտերերին սպասող դռները բացված...

Բոլորը միմյանց կժպտան, Ու ջերմ-ջերմ իրար կգրկեն, Կավետվի նոր ու մեծ, բերկրալի օրվա սկիզբ՝ Ողջ գալիքն իրենով ամփոփող...

- Կավետվի մի շատ մեծ օրվա սկիզբ... Ու կգան, կվազեն ծայրերի հայերեն զնգոցով, Հայերեն ծիծաղով անչափ ու անսկիզբ, Կվազեն, կխայտան միմյանց հրելով,

Ա - ր - ա՛, զանգն է հնչել՝ գոչելով. - Կլցվի Տաճարը հարազատ ծայրերով:

Ու թող գա՛ նորից սեպտեմբեր, Արտասվող, բայց տոկուն իմ երկրում, Հայերեն բուրացող, հայերեն ծխացող, Ծխի մեջ մաքուր հայերեն մնացող, Հին ու նոր մեր երկրում...

Ու նորից թող վազեն, թող ճչան, աղմկեն, Մանուկ, պարմանի զավակները մեր, Պուրակում, փողոցում, դպրոցի բակերում, Մշտապես թող խաղան ու զոչեն.

Վա՛յ, ա-ր-ա՛ զանգն է հնչել, Թող վազեն ու վիճեն, ու քրտնեն խաղերում, Թող կռվեն ու հաշտվեն, փոշոտվեն, Կարմրաթուշ ու հոգնած տուն մտնեն,

Ու քնեն խաղաղ գիշերով՝ Պապերից ու երկրից օրհնված գիշերով...

- Թող քնեն երկրում՝ խաղաղ գիշերով... Ու թող գա՛, նորից գա՛ Առավոտը նոր, Արևի ցուլերից զարթնի՝ ժիր մանկունքը մեր, Երկիրս լցվի՛ նրանց ծայրերով, Դպրոցի զանգերի զնգոցով, Երկիրս լցվի՛ մեր Բարի լույսով, Իմ ժողովրդի հուսառատ լույսով,

Թող վազեն մանկունքը մեր իրար հրելով, Ընկնելով, ելնելով, ուրախ ծիծաղով, Ու թող գա՛ նորից սեպտեմբեր...

23.06.2023թ.

Հեռանամ ես լռիմ ու անծայն, Կամացուկ փակեմ ես դուռը իմ, Թող ո՛չ ոք չտեսնի, չիմանա, Այդ ինչպե՛ս, ու՛ այդ ե՞րբ. չիմանան...

Մի զնգոց թող լսվի սրահում տղերքի՝ հավետ ժամապահ... Հեռանամ աննկատ, լռիմ վեհությամբ, Ամբարված վեհությամբ, քայլերով՝ անվարան...

Գնում եմ՝ Ձեզ ասեմ կամացուկ..., Գնում եմ, որ հեռվից միշտ Ձեզ մերձ եվ մտքով միշտ ձեզ հետ ես լինեմ...

Շշուռջով ասեմ՝ գնում եմ՝ ստվերիս հետ հեռանամ: Լավ ու վատ օրերի բախումից, այն բռն, ստեղծարար մեծ վագրից, Ողջ մի կյանք Տաճարում՝ օրերից Ինձ մնաց դատարկված, ժայռացած մի խեցի, Մի անդեմ ու դատարկ օրով լի:

Եվ Ձեզնով իմ հոգին լցնելով, Դուք՝ ինձնով, Ես՝ Ձեզնով լավ օրեր կերտելով, Երթյալս Սերը, սերուցքն իմ Անձի, Ցմրուր մաս-մաս բաշխելով, տալով՝ Ինձ ոչինչ - ոչինչ չթողի:

- Ինձ ոչինչ - ոչինչ չթողի, Ողջ մի կյանք Տաճարում՝ օրերից Ինձ մնաց դատարկված մի խեցի, Մի անդեմ ու դատարկ օրով լի...

Ժայռացած, քարացած, մի մաքուր սափոր... Նայեցի, զննեցի ու խորքս մտա՛

- Ձե՛, սափոր չէ սա, կարաս է մի մեծ ու դատարկ կարաս, Որ պիտի լցվի, նորից պիտ լցվի Լոկ ջրով չէ, չէ՛, յուրով, սերուցքով, Նոր ճանապարհիս՝ բաժին հանելու, Հանդիպած մարդուն՝ ծանոթ-անծանոթ, Որ նորից լցվեմ, նորից դատարկվեմ, Մաս-մաս լինելով. նորից մասնատվեմ, Ու ոչինչ-ոչինչ ինձնից չմնա...

Այս ի՛նչ էր. մի Կյանք... Պարտավորություն մտքի ու հոգու, Որ չունի ավարտ, Մինչև՛ իմ ավարտ, Թե՞ դա իմ ԽԱՉ-ն է...

Ծանրագիր մի խաչ. Խաչը՝ իմ անձի: Հազարների պես ես էլ հասկացա. Ամեն մի ավարտ նոր արարումի սկիզբն է միայն, Որ ասում է՝ ել, ել, կանգնել չկա, Եվ՛ կանգը կյանք չէ, Եվ՛ մարդկային չէ, Ու՛ իրոք ճիշտ չէ, Ու կանգնել չկա...:

Իմ ուսերին դեռ իմ Խաչն է ծանր, Իմ ձեռքին՝ նորից մի դատարկ կարաս, Որ պիտի լցվի, նորից պիտ լցվի, Ու՛ հետո, հետո անձիս ավարտին, Իմ էությունից մնա մի խեցի՝ Թրծված, անկտորում, մնայուն մի բան, ասեմք՝ մի սափոր, Ու՛ մի Պատմություն.

Այնտեղ դատարկիմ, Գուցե և ժայռի կամ քարի վրա... Բայց՝ երևացող ու տեսանելի... Լուսամփոփ Սափոր՝ Պատմությունը իմ, Որ պիտի տանեմ... Խաչս՝ ծանրագիր, թող բարձրում լինեմ...

Ու՛ ես կտանեմ Իմ անձի Խաչը՝ ծննդյան օրից իմ ձեռքը դրված, Իմ մաքուր - մաքուր Իմ ծանր Խաչը...

\*\*\*

Եկեք աղմուկ չհանենք, Եկեք լռիմ բաժանվենք, Եկեք անխոս իրար նայենք, Եկեք ոչինչ էլ չասենք...

Անխոս խոսքը, հայացքը՝ խոր խոր մտքերի, խոր իմաստի ու մեծ Սիրո, Անչափելի խորությունն են...

24.06.2023թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓԲԸ «ԳԵՏԱՎԱՆ ԷՆԵՐՋԻ». 2022թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Table with 4 columns: ԱԿՏԻՎ, տող, Լախորդ տարվա վերջին, Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին. Section I: Ոչ ընթացիկ ակտիվներ.

Table with 4 columns: ՊԱՍԻՎ, տող, Լախորդ տարվա վերջին, Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին. Section III: Սեփական կապիտալ.

Table with 6 columns: Տուգանքի ակտիվներ, տող, Լախորդ տարվա վերջին, Հաշվետու տարվա վերջին, Լախորդ տարվա վերջին, Հաշվետու տարվա վերջին.

ԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՃՈՒՐԴՎԱՆՈՒՄ

«Սնանկության մասին» ԱՀ օրենքի 89-րդ հոդվածի համաձայն 2023թ. հուլիսի 25-ին ժամը 12:00-ին «Մայակ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանի կողմից ԱՀ ԸԻ առաջին ատյանի դատարանի՝ ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42 հասցեում հայտարարվում է դատական եղանակով աճուրդ-վաճառք հետևյալ լոտերով՝

- Լոտ 2- Հարիչ(միքսեր)՝ Steno PL60L/3VP 1հատ, 2 հատ ամսանով 60 լիտր, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 180 355 ՀՀ դրամ:
Լոտ 3- Կրեմի սրսկիչ՝ DE DANIELI RMP83 15լիտր, 1հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 62 914 ՀՀ դրամ:
Լոտ 4- Խմորի գնդեր սարքող սարք՝ RAM S30 1հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 167 772 ՀՀ դրամ:
Լոտ 5- Խմորհարիչ՝ K-M130 130կգ 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփակա-

- նատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 209 715 ՀՀ դրամ:
Լոտ 6- Վառարակ՝ Bassanina zoom 1212 1հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է անաշխատունակ վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 419 430 ՀՀ դրամ:
Լոտ 7- Դարակաշար ռատացիոն վառարանի համար՝ 50x70սմ(18դարակ)7 հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 58720 ՀՀ դրամ:
Լոտ 8- Խմորի գնդեր բացող սարք՝ Kempflex SF600/1400 1հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 146 801 ՀՀ դրամ:
Լոտ 9- Դարակաշար թիթեղներով ռատացիոն վառարանի համար՝ 60x80 սմ(18դարակ)՝ 7 հատ, մետաղյա թիթեղներ(դարակ)՝ 72հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 88500 ՀՀ դրամ:
Լոտ 10- Դարակաշար թիթեղներով ռատացիոն վառարանի համար՝ 60x80 սմ(18դարակ)՝ 18 հատ, մետաղյա թիթեղներ(դարակ)

- 108 հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 211 394 ՀՀ դրամ:
Լոտ 11-Խմորհարիչ՝ EFFEDUE KG.160 160կգ, 1հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 272 630 ՀՀ դրամ:
Լոտ 12 – Խմորի հասունացման խցիկ՝ 294x204x200սմ չափսի, պատերը՝ ինքնաշեն, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 188 744 ՀՀ դրամ:
Լոտ 13- Վառարակ՝ Bassanina rotor 57, 1հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է անաշխատունակ վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 419 430 ՀՀ դրամ:
Լոտ 14- Թիթեղյա դարակներ՝ 150հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 31 458 ՀՀ դրամ:
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ՖԱ-ի դեպոսիտ՝ անձնագրի պատճենը, իսկ ԻԱ-ի դեպոսիտ՝ պետական

գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթերը: Նախավճար կազմում է մեկնարկային գնի 5 տոկոսը, որը փոխանցվում է սնանկության հատուկ հաշվին՝ «Հայքիզնեսթանկ» ՓԲԸ «Ստեփանակերտ» մ/դ հ/հ 1150012179069063:
Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդին նախորդող 5 օրվա ընթացքում, ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա ժամը 16.00-ն, կարող են հայտ ներկայացնել ԼՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ մասնակցի վկայական ստանալու համար: Աճուրդում հաղթող է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գնորդը կրելու է գույքի ձևակերպման, գրանցման և գույքահարկի պարտքերի վճարման պարտավորությունները: Մանրամասներին ծանոթանալու համար դիմել սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանին, հեռ.՝ 097-22-29-22 կամ 043-08-17-33:

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱՆԻԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԱՀ ԸԻ առաջին ատյանի դատարանի 20.06.2023թ. ԸԻԴ/0001/04/23 որոշմամբ «ԱՆԱՐ» ՍՊԸ (ՀՎՀՀ 90034925) նկատմամբ սկսված է լուծարման վարույթ:
Սնանկության գործով կառավարիչ՝ Ա. Խաչատրյան

ԿՈՐԵԼ Է

Լարիսա Անդրանիկի Ղահրամանյանի՝ Ստեփանակերտի Թամարա Քամայանի անվան պետական քոլեջի «Քույրական գործ» բաժանմունքի առկա բաժին 2015թ. ընդունվելու և այն 2018թ. ավարտելու մասին AK-159126 համարի դիպլոմը (մնացել է 2020թ. պատերազմում թշնամու կողմից օկուպացրած Ասկերանի շրջանի Ջրաղացներ գյուղում):
Համարել անվավեր:
Մալինա Ջալալի Սարգսյանի 10-ամյա կրթության ատեստատը հ. 093557՝ տրված 1997թ. Կոնողոտի միջնակարգ դպրոցի կողմից:
Համարել անվավեր:
Աշոտ Արմենի Առուշանյանի՝ 2014-15 ուսումնական տարում Ստեփանակերտի ռազմամարզական վարժարան ավարտելու մասին ԱԱ N109307 ատեստատը:
Համարել անվավեր:

Հիննադիր՝ «Լուսարար» ՓԲԸ
Ստեփանակերտ, Գ. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info
Սեքերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության՝ 05.07.2023թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: